

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Հայաստանի Ժողովուրդի Տրամադրութիւնները՝ Ընտրութիւններու Շեմին

Միջազգային Հանրապետական Հիմնարկը անցեալ շաբաթ հրապարակեց Հայաստանի վերաբերեալ իր հետազոտական հարցախոյզը: Նախ պէտք է արձանագրել որ Հիմնարկը մասամբ կը ֆինանսաւորուի Ամերիկեան կառավարութեան կողմէ եւ ինչպէս անունը կը յուշէ, մօտ կը նկատուի Հանրապետական Կուսակցութեան: Նոյն պայմաններով կը գործէ նաեւ Միջազգային Դեմոկրատական Հիմնարկը, որ կը թեքի դէպի Դեմոկրատական Կուսակցութիւնը:

Հանրապետական Հիմնարկը է որ, Թաւշեայ յեղափոխութենէն ետք սկսած է ուշադրութիւն դարձնել Հայաստանի ներքին իրադարձութիւններուն ու այդ ուղղութեամբ կը կատարէ հանրային կարծիքի համապարփակ ուսումնասիրութիւններ, ուր ոչ միայն կը փորձէ ամփոփել ժողովուրդի կարծիքը ընտրական գործընթացներուն վերաբերեալ, այլ նաեւ՝ ընկերային, տնտեսական, դատական, արտագաղթ եւ այլ հարցերու շուրջ:

Հիմնարկը, ի տարբերութիւն Հայաստանեան աւանդական հարցախոյզերուն, կը ներկայացնէ նաեւ հիմքային վիճակագրութիւններ, անոնց մէջ ներառելով մասնակիցներու ժողովրդագրական պատկերը, ըստ տարիքի, սեռի, տնտեսական վիճակի եւ բնակութեան վայրի: Այս բոլորը կու գան աւելի մեծ վստահութիւններ շնչելու, որ հարցախոյզը կատարուած է գիտական մօտեցումով ու սկզբունքներով:

Խորհրդարանական ընտրութիւններու շեմին գտնուելով հարցազրոյցին մէջ մեծ ուշադրութեան արժանացած են քաղաքական տարբեր գործիչներու եւ կուսակցութիւններու վարկանիշերը: Նիկոլ Փաշինեան կը շարունակէ մնալ ամենէն բարձր վարկանիշը ունեցող քաղաքական գործիչը, սակայն այդ արձանագրած է որոշ անկում: Եթէ Մարտ ամսուն նոյն Հիմնարկի հրապարակած արդիւնքներով վարչապետի նկատմամբ կար 55 տոկոս դրական կեցուածք, ապա այժմ այդ դարձած է 45 տոկոս: Կուսակցութիւններու պարագային քաղաքացիական Պայմանագիր կուսակցութեան վարկանիշ 33 տոկոսէն իջած է 26 տոկոսի: Այս ցուցանիշերը պէտք է մտահոգին իշխանութեան վրայ եղող որեւէ քաղաքական ուժի: Սակայն,

Ատրպէյճանական Ուժերը Պէտք է Դուրս Գան Հայաստանի Տարածքէն. Ըսաւ Նախագահ Մաքրոն

Յունիս 1-ին այցելելով Փարիզ, Հայաստանի վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան հանդիպում ունեցաւ Ֆրանսայի նախագահ՝ Էմանուէլ Մաքրոնի հետ: Երկու երկիրներու ղեկավարները նախ յայտարարութիւն յայտարարութիւն ըրին լրատուամիջոցներուն համար: Մաքրոն մասնաւորապէս նշեց, որ Հայաստան այս պահուն ճգնաժամային իրավիճակի մէջ կը գտնուի եւ ՀՀ-ի համար դժուար փուլին կը կաշնայ Փաշինեանի այցը: Ան շեշտեց, որ Ֆրանսան պատրաստ է աջակցիլ եւ առաջին հերթին ռազմագերիներու եւ այլ ձերբակալուածներու վերադարձի հարցով, ինչպէս նաեւ ընդգծեց, որ Ատրպէյճանը պէտք է ետ քաշուի մինչեւ Մայիս 11-ի ելման դիրքերը, եւ որ սահմանագծան գործընթացը պէտք է տեղի ունենայ բացառապէս խաղաղ բանակցութիւններու միջոցով:

«Թանկագին Նիկոլ, մենք շատ աշխատած ենք միասին վերջին տարիներուն ձեր յանձնառութենէն ի վեր՝ ի նպատակ ժողովրդավարութեան պաշտպարի, քուսակցիայի դէմ, եւ ես կը չիշտեմ յատկապէս Ֆրանսա-քոֆոնիայի գագաթնաժողովը, իմ այցելութիւնը Երեւան եւ մեր այցելութիւնները եւ մեր քննարկումները:



Հայաստանի եւ Ֆրանսայի ղեկավարները Փարիզեան հանդիպումի ընթացքին

«Այս աշխատանքային այցելութիւնը շատ կարեւոր պահուկ իրագործուի, Հայաստանը անվտանգութեան ճգնաժամի մէջ է: Նոյնքան Գ-ի հրադարարի յայտարարութիւնէն ի վեր մենք կը նկատենք, որ եթէ նոյնիսկ ընդհանուր առմամբ հրադարարը կը պահպանուի, բաց ընելիքները շատ են, Ֆրանսան պատրաստ է օգնել այս հարցով:

«Կը փորձենք օգնել երկխօսութեան հաստատման հարցով:

26 Քաղաքական Ուժեր Կը Մասնակցին Խորհրդարանական Ընտրութիւններուն

Յունիս 20-ի Հայաստանի արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն դաշինքներու եւ կուսակցութիւններու վերջնական գրանցումը վերջացաւ: Սպասուող ընտրութիւններուն կը մասնակցի մրցանիշային թիւով՝ 26 քաղաքական ուժ՝ 22 կուսակցութիւն եւ 4 կուսակցութիւններու դաշինք: Որեւէ քաղաքական ուժի գրանցում չէ մերժուած:

Կեդրոնական ընտրական յանձնաժողովի (ԿԸՅ) Մայիս 31-ի նիստին, արտահերթ ընտրութիւններուն մասնակցող կուսակցութիւններուն, կուսակցութիւններու դաշինքներուն նաեւ վիճակահանութեամբ ընտրութիւններուն մասնակցելու համարներ տրամադրուեցան: Օրինակ՝ Նիկոլ Փաշինեանի գլխաւորած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնը 3-րդ համարն է, երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի գլխաւորած «Հայաստան» դաշինքը՝ 24-րդը, առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի գլխաւորած Հայ ազգային քոնկրէսը 2-րդն է, «Պատիւ ունեմ»-ը, որի ցուցակը գլխաւորութեամբ է ԱԱԾ՝ նախկին տնօրէն՝ Արթուր Վանչեցեան, 6-րդն է, խորհրդարանական «Լուսաւոր Հայաստանը» 9-րդ համարի ներքոյ է,



ԿԸՅ-ի նախագահ՝ Տիգրան Մուկուչեան

«Բարգաւաճ Հայաստանը»՝ 14: Ընտրութիւններուն մասնակցելու յայտ ներկայացնողներու թիւի բաւական մեծ ըլլալուն մասին խօսած է ԿԸՅ-ի նախագահ՝ Տիգրան Մուկուչեան. «Անկեղծ ասած՝ 12 թուականից ես չեմ չիշտեմ նման մեծ մասնակցութիւն: Մասնակցութեան առումով եթէ նայում ենք 12 թուականից սկսած, թերեւս այն ժամանակահատուածն է, երբ ես, ըստ էութեան, ԿԸՅ-ում եմ, նման մեծ թիւով կուսակցութիւնների մասնակցութիւնները շատ քիչ են»:

Յոգնած Ենք Ամէն Տարի Սպասել, Թէ Ապրիլ 24-ին Ինչ Պիտի Ըսէ Միացեալ Նահանգները Հայերու Մասին. Էրտողան

Թուրքիոյ նախագահ՝ Ռէճեպ Թայյպ Էրտողան մտադրութիւն յայտնած է քննարկել երկու երկիրներու յարաբերութիւններու վիճակը իր ամերիկացի գործընկեր Ճօ Պայտընի հետ առաջիկայ հանդիպման ժամանակ:

«Ընթացքի մէջ են նախնական նախապատրաստութիւնները (Յունիսին ՆԱԹՕ-ի գագաթնաժողովի ծիրէն ներս կաշնայիք Թուրքիոյ եւ Միացեալ Նահանգներու նախագահներու հանդիպման համար): Բանակցութիւններու ընթացքին մենք կը բարձրացնենք այն հարցը, թէ ինչու Թուրքիոյ եւ ԱՄՆ-ի յարաբերութիւնները այսպիսի լարուածութեան փուլի մէջ են», ըսած է Թուրքիոյ առաջնորդը TRT հեռատեսիլային կայանի տուած հարցազրոյցի ընթացքին:

Թուրքիոյ ղեկավարը անընդունելի անուանած է Ուաշինկթընի դիրքորոշումը «Օսմանեան

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒ

Արի Յոյց Տանք, Թե՛ Վենդետան Որն Ե Եղել

Ռոբերտ Քոչարեանը ուսուսական մէկ ընկերութեան հետ հարցազրոյցում յայտարարել է, որ իշխանութեան գալու ղէպքում՝ փաշինեանի եւ նրա թիմակիցների հետ հաշիւների մաքրում՝ վենդետաներ չպէտք է լինեն, փոխարէնը պէտք է արդարադատութիւն լինի:

«Դրանք միանգամայն տարբեր բաներ են. այն, ինչ կատարուում էր ինձ հետ դա իրական վենդետա էր: Ի դէմս ինձ սպառնալիք էին տեսնում եւ փորձում էին տարբեր միջոցներով այդ սպառնալիքը չէզոքացնել: Այն ժամանակ ասացի՝ կը զոջաք, որ կապուել էք հետս: Կարծում եմ՝ հիմա արդէն զոջում են», - ասել է Քոչարեանը:

Վենդետայից է խօսում Ռոբերտ Քոչարեանը: Մի հատ հարց տանք. Որ Քոչարեանը գնացել էր Եռաբլուր ու որդեկորոյս ծնողների անէծքին արժանանում, ինքը գիտէ՞ր, որ այնտեղ առնուազն երկու հերոս կայ, որոնց նկատմամբ քաղաքական հաշուեյարդար է տեսել: Վազգէն Մարգարեանի մասին չենք խօսում, այլ Սմբատ Այվազեանի ու Դաւիթ Մաթեոսեանի: Ի՞նչ երեսով էր անցնում նրանց շիրիմների կողքով: Իսկ որ վանօ Սիրադեղեանի 70-ն անց եղբօրը բռնել էր տալիս, դրանից աւելի ցայտուն վենդետա լինու՞մ է:

Ինքը հաշուե՞լ է, թէ արցախեան պատերազմի յաղթանակներում մեծագոյն աւանդ ունեցած քանի գինուորականի հետ է հաշուեյարդար տեսել՝ զուտ ընդդիմադիր լինելու համար:

1. Սմբատ Այվազեան, «Մեծն Տիգրան» աշխարհագորի ղեկավար, Քաշաթաղի առաջին պարեոս
2. Սասուն Միքայէլեան, «Սասուն» ջոկատի հրամանատար
3. Յակոբ Յակոբեան, «Մալաթիա» ջոկատի հրամանատար, ՀՀ ԶՈՒ փոխգնդապետ
4. Գեղամ Յարութիւնեան, ՀՀ ՊՆ նախկին փոխնախարար
5. Յովիկ Յարութիւնեան, «Արաբկիր» ջոկատի հրամանատար, Հակահետախուզութեան վարչութեան առաջին պետ
6. Սամուէլ Բաբայեան, Արցախի ՊՆ նախարար, գեներալ-լեյտենանտ, Արցախի հերոս
7. Արարատ Զուրաբեան, ազատամարտիկ, «Սպանդարեան» կամաւորական ջոկատի հիմնադիրներից
8. Վոլոդիա Աւետիսեան, ազատամարտիկ, գնդապետ
9. Դաւիթ Մաթեոսեան, ազատամարտիկ, Մեղրու նախկին ոստիկանապետ
10. Յարութիւն Ուուուտեան, ազատամարտիկ
11. Մուշեղ Սաղաթեան, ազատամարտիկ
12. Վանօ Սիրադեղեան, ՀՀ ՆԳ նախկին նախարար, 1992թ. Լաչինի միջանցքի պաշտպանութեան համակարգողներից
13. Աշոտ Զաքարեան, «Կուճայրի» ջոկատի հրամանատար

14. Ժիրայր Սեֆրիւեան, Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար, փոխգնդապետ
15. Մկրտիչ Սափեան, ազատամարտիկ
16. Ժորա Սափէյեան, ազատամարտիկ
17. Միսանիկ Մալխասեան, ազատամարտիկ
18. Խաչիկ Միմոնեան, «Զովունի» ջոկատի հրամանատար
19. Վարդան Մալխասեան, ազատամարտիկ
20. Վլադիմիր Առաքելեան, «Տիգրան Մեծ» ջոկատի հրամանատար
21. Սարգիս Հացպանեան, ազատամարտիկ
22. Սասուն Աղաջանեան, ազատամարտիկ, Փոխգնդապետ, «Մարտական խաչ» առաջին եւ երկրորդ աստիճանի շքանշանակիր
23. Վահան Շիրխանեան, ՀՀ ՊՆ նախկին փոխնախարար

Իսկ ընդդիմադիր քանի՞ գործչի նկատմամբ է Քոչարեանը վենդետա իրականացրել: Հաշուե՞լ է: Մի հատ ցանկը նայէք.

1. Ալեքսանդր Արզումանեան - 5 տարի
2. Անուշ Ղաւալեան - 2,4 տարի
3. Աշոտ Մանուկեան - 5 տարի
4. Արամ Բարեղամեան - 6 տարի
5. Արմէն Աբրահամեան - 3,6 տարի
6. Գաբրիէլ Գաբրիէլեան - 7 տարի
7. Գագիկ Զհանգիրեան - 3 տարի
8. Գէորգ Ղազարեան - 5 տարի
9. Գէորգ Մանուկեան - 4 տարի
10. Գէորգ Սաֆարեան - 2,4 տարի
11. Գրիգոր Ոսկերչեան - 2 տարի
12. Լաւրենտ Գասպարեան - 3,11 տարի
13. Լեւիկ Խաչատրեան 1,6 տարի
14. Կարէն Թարխանեան - 4 տարի
15. Հայկ Գէորգեան - 1,6 տարի
16. Յարութիւն Ուուուտեան - 7 տարի
17. Յովհաննէս Ղազարեան - 1 տարի
18. Մասիս Այվազեան - 1,6 տարի
19. Միսանիկ Ժորայի Մալխասեան - 5 տարի
20. Նուէր Ստեփանեան - 3 տարի
21. Շոթա Սաղաթեան - 2 տարի
22. Պետրոս Մակէյեան - 3 տարի
23. Ռոման Մնացականեան - 3,6 տարի
24. Սամուէլ Կարապետեան - 3 տարի
25. Սիմոն Ամիրխանեան - 3տարի
26. Սուրէն Սիրունեան - 5 տարի
27. Վահէ Ղազարեան - 4,6 տարի
28. Վարդան Ղաւալբաբունց - 4 տարի
29. Վարդան Զհանգիրեան - 3 տարի
30. Տիգրան Մկրտչեան - 3 տարի:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Փաշինեանը Փարիզում Եւ Բրիւսելում Կը Փոխի՞ Խաղը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Յունիսի 1-2-ին Հայաստանի վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանն աշխատանքային այցով լինելու է Ֆրանսայում ու Բելգիայում, որտեղ կը հանդիպի նախ Ֆրանսայի քաղաքական ղեկավարութեան հետ՝ այդ երկրի նախագահ Էմանուէլ Մակրոնի գլխավորութեամբ, յետո՞՛ Եւրոպայի խորհրդի նախագահ Շարլ Միշելի: Տեւական ընդմիջումից յետոյ սա Հայաստանի ղեկավարի առաջին այցն է Եւրամիութիւն: Այդ մեծ դադարը պայմանաւորուած էր զգալիորէն օբիեկտիւ հանգամանքներով՝ կորոնավարակ, յետոյ պատերազմ, յետոյ էլ յետպատերազմեան բարդ ամիսներ, միաժամանակ սակայն նկատելի էր նաեւ, որ եւրոպական քաղաքական ուղղութիւնը հայաստանեան քաղաքական շրջանակում նահանջել է զգալիորէն: Արդեօք՞ Նիկոլ Փաշինեանի այցը դրա վերականգնման նշան է, թէ՞ ունի առաւելապէս ընթացիկ քաղաքական բնոյթ, կապուած թէ՛ հայ-ատրպէյճանական սահմանում առկայ իրավիճակի եւ ռեգիոնալ նոր իրողութիւնների յետագայ զարգացման սցենարների, թէ՛ Հայաստանում նախընտրական իրողութիւնների հետ:

Բոլոր ղէպքերում, Փաշինեանի այցը թերեւս միարժէք ողջունելի է, յատկապէս հաշուի առնելով այն առաջարկները, որ արել է Ֆրանսան թէ՛ արցախեան հարցի առնչութեամբ ընդհանրապէս, թէ՛ հայ-ատրպէյճանական սահմանա-

լին իրադրութեան: Ինչպէս յայտնի է, Փարիզը խօսում է Արցախի կարգավիճակի, Թուրքիայի դերի, տարածքների ղեկուպացի մասին, իսկ հայ-ատրպէյճանական սահմանային իրադրութեան առումով առաջարկում է հարցը քննարկել ՄԱԿ ԱՊ-ում եւ պատրաստ է մանդատ ստանալու ղէպքում Հայաստանին յատկացնել անգամ ուղղման օգնութիւն: Այդ օրակարգերը սակայն էապէս հակոտնեայ են Հայաստանի «ուզմովարական դաշնակից» Ռուսաստանի առնուազն բարձրաձայնած նպատակների հետ Թուրքիայի ու Ատրպէյճանի հետ գործակցութեան ու պայմանաւորուածութիւններին, որ հաստատուել են պատերազմով եւ դրա հետեւանքով: Նշանակու՞մ է դա, որ Հայաստանի վարչապետի պաշտօնակատարի Ֆրանսա այցը ստանում է Ռուսաստանի դիրքորոշումների պարագայում քաղաքական ալլընտրանքի ուղղութեամբ գործունէ քայլի իմաստ: Այլ կերպ ասած՝ Նիկոլ Փաշինեանը գնում է Ֆրանսա, որովհետեւ այս օրերի ընթացքում դարձաւ ակնառու, որ հայ-ատրպէյճանական սահմանային իրադրութիւնը Մոսկուան ոչ միայն չի կարողանում կամ չի ուզում լուծել, այլ ըստ էութեան կամայ, թէ՛ ակամայ աւելի շատ ծառայեցնում է Հայաստանի ներքին կեանքում գործող իշխանութեան դիրքերը հարուածի տակ ղնելուն:

Նիկոլ Փաշինեանը Փարիզում ու Բրիւսելում կը փորձի վերականգնել դիրքերը, կամ առնուազն կասեցնել դրանց հասցուող հար-

ուածները: Միւս կողմից սակայն, արդեօք՞ դրանք չեն ուժգնանայ, եթէ Ֆրանսա ու Բելգիա այցերը իրապէս դիտարկում են Ռուսաստանի դիրքորոշումներին հակառակ քաղաքական տրամաբանութեան մէջ: Թէ՞ այդուհանդերձ ամէն ինչ այդքան միարժէք եւ պարզ չէ, ու Ֆրանսայի գործօնը կարեւոր է նաեւ Ռուսաստանի համար՝ Թուրքիայի եւ Ատրպէյճանի հետ յարաբերութիւններում դիրքերը ամրացնելու համար: Յամենայնդէպս անկասկած է, որ Հայաստանի համար Փաշինեանի այցը կանխատեսելի եւ կայուն շահեկանութիւն կարող է ունենալ այդ տրամաբանութեան, այլ ոչ թէ՛ Ռուսաստանի դիրքաւորմանը հակընդդէմ բնոյթի պայմաններում, անկախ որեւէ մէկի անձնական պատկերացումից կամ ցանկութիւնից: Խնդիրը իրական քաղաքականութեան դաշտում է եւ այստեղ Հայաստանի համար առանցքայինն անշուշտ ռեգիոնալ իրավիճակի առաւելագոյն կայունացման հասնելն է ու այդ գործում Ֆրանսայի հնարաւորութիւնն ու պատրաստակամութիւնն օգտագործելը, սակայն՝ մի կողմից իհարկէ Ռուսաստանի ինքնակալութեան խիստ վտանգաւոր ռեժիմը թօթափելու համար, միւս կողմից՝ առանց Ռուսաստանին սաղորելու: Խոշոր հաշուով, Երեւանի համար առնուազն սկզբի տեսանկիւնից թերեւս պէտք է դիտարկել լինի ռեգիոնալ ուսուցիչութեան խաղը Ֆրանսա-Ռուսականով փոխելու նպատակը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Իրաւապաշտպանները Կը Բացառեն Տեղական «Իշխանիկներու» Դերակատարումը Ընտրական Գործընթացներուն Կրայ



Իրաւապաշտպան Արթուր Սաքունց եւ «Ասպարէզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղեան

Իրաւապաշտպան Արթուր Սաքունցի համար անհասկնալի է, թէ ընտրական մրցավազքի մէջ մտած ուժերը ինչ պիտի ներկայացնեն ընտրողներուն. - «Ես նոյնիսկ չգիտեմ 28 գաղափարական կամ հայեցակարգային էջ ինչ մօտեցումներ պէտք է ներկայացունեն, որ հանրութիւնը ընտրէ»:

Այս ընտրութիւնները կը կայանան պարզ համամասնական ընտրակարգով՝ առանց տարած քայլի ցուցակներու: Լրագրողներու «Ասպարէզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղեան կ'ակնկալէ, որ այս համակարգը վերջապէս կը բացառէ տեղական «իշխանիկներու» ու թաղային հեղինակութիւններու դերակատարումը բուն ընտրական գործընթացին վրայ:

Նախորդ արտահերթ ընտրութիւններուն արձանագրուած ժողովրդավարական առաջընթացը չի նահանջեր, կը կարծէ Արթուր Սաքունցը, պատմութեան անիւր ետ չի շրջուիր:

«Կարող է խախտումներ անեն, բայց վստահութիւնս հանրութեան վրայ շատ աւելի մեծ է, որ քաղաքացիները տուրք չեն տայ: Ինչ որ մի հատուած կարող է, բայց տուրք չեն տայ ո՛չ կաշառքին, ո՛չ գալթակողութիւններին, եւ, ամէնից կարելոր է մի բան՝ արդէն վախը չափած է մարդկանց, էջ վախի հասկացողութիւնը, որ վախենան, կարծիք չասեն եւ այլն,

դա արդէն յաղթահարուած է, սա համարէք հիմնական եւ հիմնարար ձեռքերում թաւշեայ յեղափոխութեան», - ընդգծեց Սաքունցը:

Լեւոն Բարսեղեան շեշտած է, որ այժմ Հայաստանի վարչական միջոցներուն միայն իշխանութիւնը չէ, որ կը տիրապետէ. - «Վարչական ռեսուրս ասելիս մենք պիտի նկատի ունենանք ոչ միայն պետական եւ համայնքային պիւտճէներու խողովակներով ֆինանսաւորուող համակարգերը, վարչական ռեսուրս պիտի համարենք նաեւ մասնաւոր ձեռնարկատիրութեան մէջ վարչական մարմնի օգտագործումը»:

Բարսեղեան կը համեմատէ 5 տարի առաջ ընդդիմութեան ու իշխանութեան տիրապետած միջոցները: Անոր խօսքով՝ հիմա տեղերով փոխուած են՝ ե՛ւ նիւթական միջոցի, ե՛ւ մամուլի առումով:

Թէ ինչպիսին կ'ըլլայ Յունիս 20-ի ընտրութիւններու ընթացքը, Լեւոն Բարսեղեանի համոզումով, գնդակը իրաւապահներու եւ իշխանութեան դաշտն է. - «Շատ էական է, թէ ինչ որ մի վճռական պահի, արդեօք իրաւապահ համակարգը չի որոշի աջ քաշել եւ կանգնել, տեսնել, թէ այնտեղ ինչ այլանդակութիւններ կարող են լինել, եւ հասկանալի է, որ գլխաւոր պատասխանատուն, ամէն դէպքում, գործող իշխանութիւնն է»:

Սարգերու Մէջ Ամբողջութեամբ Պատռուած Են Քոչարեանի Պատժումները

Լոռու մարզէն ներս փակցուած, բայց արդէն իսկ քաղաքացիներու կողմէ պատռուած եւ կամ կարմիր գոյնով ներկուած են Քոչարեանի գիրքը գովազդող պաստառները:

Այլ վայրերու մէջ եւս քաղաքացիները կը շարունակեն ներկ ու ցեխ շպրտել Քոչարեանի պաստառներուն վրայ:


Սոցիալական ցանցերու վրայ օգտատէրերը վերջին օրերուն կը հրապարակեն Սիսիանի, Գորիսի, Սպիտակի, Կապանի, Արտաշատի, Սեւանի, Իջեւանի, Մեղրիի եւ այլ բնակավայրերու մէջ Ռոպերթ Քոչարեանի՝ կարմիր ներկով ներկ-



ուած կամ պատռուած պաստառներու լուսանկարները:

Հայաստանի ոստիկանութիւնը կը տեղեկացնէ որ, այս հարցով կան ձերբակալուած անձիք, որոնք իրարմէ անկապ կատարած են այս արարքները:

Իշխող Քաղաքական Ուժի Կարկանդակներին Ամիսներուն Նուագած Է



Շուրջ 1500 քաղաքացիներու մասնակցութեամբ Ապրիլի 8-էն մինչեւ Մայիսի 4-ը կատարուած հարցախույզի համաձայն՝ իշխող քաղաքական ուժի վարկանիշը վերջին ամիսներին ընթացքում նուազել է: Նախորդ՝ ընդամէնը երկու ամիս առաջ կատարուած հարցախույզի արդիւնքներով՝ Նիկոլ Փաշինեանի ղեկավարած քաղաքական ուժը ունէր աւելի բարձր վարկանիշ: Այդ ժամանակ Միջազգային Հանրապետական Ինստիտուտի հարցումներուն պատասխանողներու 33 տոկոսը նշած էր, որ եթէ յաջորդ կիրակի ընտրութիւններ կայանան, ապա իրենց քուէն կու տան իշխող՝ «Իմ քայլը» խմբակցութեանը: Այս հարցման արդիւնքներով՝ Նիկոլ Փաշինեանի գլխաւորած «Քաղաքացիական Պայմանագրի» օգտին կը քուէարկէ 26 տոկոսը: Միւս ուժերու օգտին՝ քաղաքացիներու 1 տոկոսը: 55 տոկոսը դժուարացած է պատասխանել թէ որ ուժին կը պատրաստուին քուէարկել:

Հակառակ իշխող ուժի վարկանիշի անկման, վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանն ու Ազգային ժողովի նախագահ Արա-

րատ Միրզոյեան դրական գնահատականներն ստացած են՝ Փաշինեանը 45 տոկոս, իսկ Միրզոյեանը՝ 40 տոկոս:

Հարցուածներու ճնշող մեծամասնութիւնը՝ 72 տոկոսը յայտնած են, որ անպայման կամ ամենայն հաւանականութեամբ պիտի մասնակցին ընտրութիւններին:

Քաղաքագէտ Ստեփան Գրիգորեան կարծիքով այս տուեալները կը համարէ իրականութեան արտացոլում եւ կը ընդգծէ որ, նախկին իշխանութեան ներկայացուցիչներու ձեւաւորած ընդդիմութեան կողքին կան նաեւ այլ ընդդիմադիրներ, որոնց հանրութիւնը այդքան էլ մեծ ուշադրութիւն չի դարձներ. «Ընդդիմադիրը երբ որ մենք ասում ենք, առաջին հերթին մարդիկ նկատի ունեն նախկին իշխանութիւններին՝ Ռոպերթ Քոչարեանին՝ իր շուրջ հաւաքուած ուժերին, եւ Սերժ Սարգսեանին՝ իր շուրջ հաւաքուած ուժերին: Քանի որ իրենց նկատմամբ բաւական ուժեղ է քննադատութիւնն այսօր էլ, պարզ է՝ իրենց վարկանիշը շատ բարձր չի, ու ամենակարեւորը դէմ եղածների թիւը բաւական մեծ է»:

Փաշինեան Քոչարեանին Եւ Տեր Պետրոսեանին Կը Հրաւիրէ Բանավէճի

Ապարան քաղաքի մէջ, համակիրներու հետ հանդիպման ընթացքին Նիկոլ Փաշինեան ըսաւ, թէ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն ընդառաջ՝ Յունիս 18-ին հեռատեսիլային բանավէճ տեղի պիտի ունենայ:

«Ես ե՛ւ Ռոպերթ Քոչարեանին, ե՛ւ Լեւոն Տէր Պետրոսեանին սպասում եմ Յունիսի 18-ին կայանալիք ուղիղ եթերում բանավէճի: Այդ բանավէճի ժամանակ ամենալաւը կ'երեւայ, որովհետեւ շատ հեշտ է փակ դահլիճներում խօսել, տղամարդ լամիշ լինել: Կու գաք, դէմ-դիմաց կը կանգնենք եւ կը խօսենք», - յայտարարած է Փաշինեան:

Առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի գլխաւորած Հայ Ազգային Գոնկրէսի փոխնախագահ Լեւոն Զուրապեան «Ազատութիւն» ռատիոկայանի այն հարցին, թէ ի՞նչ դիրքորոշում ունին վարչապետի պաշտօնակատարի առաջարկի մասին, պատասխանեց, թէ բան մը ըսած է, եւ իրենք ամէն ըսածին վերաբերեալ դիրքորոշում պէտք է ունենան:

Եթէ Հանրային Հեռատեսիլէն հրաւէր ստանայ, արդեօք Գոնկ-

րէսը կը մասնակցի՞, բանավէճին, Զուրապեան պատասխանած է որ, «եթէ»-ներով հարցերուն չուզեր անդրադառնալ:

«Հողեր ազատագրած երկրորդ նախագահը որեւէ իրավիճակում չպէտք է բանավէճի մէջ մտնի մի անձի հետ, որը հողեր է յանձնում», այս խօսքերով երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի գլխաւորած «Հայաստան» դաշինքի պաշտօնական ներկայացուցիչ՝ Արամ Վարդեանեան արձագանգած է վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանի՝ առաջին եւ երկրորդ նախագահներ՝ Լեւոն Տէր Պետրոսեանը ու Ռոպերթ Քոչարեանը հեռատեսիլային բանավէճի հրաւիրելու առաջարկին:

Հանրային հեռուստաընկերութեան «Ազատութիւնին» հաղորդած են, թէ կը պատրաստուին բանավէճ կայացնել, բայց թուականը յայտնի չէ տակաւին:

«Եթէ վախենալու բան չունեն, բոլորը պէտք է ընդունեն բանավէճի հրաւերը», - պնդած է ազգային ժողովի իշխող «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր՝ Հայկ Կոնջորեան:

ԼՈՒՐԵՐ

Վարչապետի Խօսնակը Այվազեանին Պարզաբանում Կ'ակնկալէ Անոր Յայտարարութեան Առնչութեամբ

Վարչապետի պաշտօնակատարի Խօսնակ՝ Մանէ Գեորգեան արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար՝ Արա Այվազեանին հրապարակային պարզաբանում կ'ակնկալէ, այսօր Մայիս 31-ին անոր ըրած յայտարարութեան առնչութեամբ:

«Մենք պարոն Այվազեանին շնորհակալութիւն ենք յայտնում կատարուած աշխատանքի համար, այնուամենայնիւ կարծում ենք մեր պետական եւ ազգային շահը պարտադրում է, որ պարոն Այվազեանը հրապարակային պարզաբանի այդ ո՞վ, ե՞րբ, որտե՞ղ եւ ինչպէ՞ս էր պատրաստուած ինչ որ քայլ անել կամ որոշում կայացնել, որ հակասում է մեր երկրի պետական եւ ազգային շահին: Ակնկալում ենք, որ պարոն Այվազեանը հրապարակային կը պարզաբանի դրանք», - «Արմէնփրէս»-ի հետ զրոյցի ընթացքին ըսած է Նիկոլ Փաշինեանի Խօսնակը:

Արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարի պաշտօնին անցեալ հինգշաբթի օր հրաժարական տուած Արա Այվազեան այսօր Արտաքին գործոց նախարարութեան անձնակազմին հետ հրաժեշտի հանդիպման ժամանակ մասնա-



Վարչապետի Խօսնակ՝ Մանէ Գեորգեան

ւորապէս ըսած է, թէ իր հրաժարականի որոշումը պայմանաւորուած էր այն պատճառով, «որպէսզի երբեւիցէ որեւէ կասկած չլինի, որ այս նախարարութիւնը կարող է ինչ որ քայլ անել կամ համաձայնութիւն տալ ինչ որ զաղափարներ, նախաձեռնութիւններ, որոնք մեր պետականութեան, մեր ազգային եւ պետական շահի դէմ են եղել»:

Ապաշրջափակման Հարցով Եռակողմ Խումբի Աշխատանքները Դադրած Են

Տարածաշրջանի բոլոր տնտեսական եւ փոխադրային կապերը ապաշրջափակելու նպատակով՝ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի փոխվարչապետներու նախագահութեամբ ստեղծուած աշխատանքային խումբի աշխատանքները չեն շարունակուիր՝ մասնաւորապէս սահմանային վերջին միջադէպերէն ի վեր: «Արմէնփրէս»-ի հարցին ի պատասխան այս մասին ըսաւ ՀՀ փոխվարչապետի պաշտօնակատար՝ Մհեր Գրիգորեան, որ հայկական կողմէն կը գլխաւորէ աշխատանքային խումբը:

«Այսօրուայ դրութեամբ աշխատանքները չեն շարունակուում: Բազմիցս յայտարարել եմ, որ այդ աշխատանքներն արդիւնաւէտ կը լինեն մի դէպքում, եթէ ֆոնը եւ ընդհանուր իրավիճակը լինի առնուազն կայուն: Այս իրավիճակում եւ սահմանում այս իրադրութիւնների պարագայում ես չեմ կարծում, որ հնարաւոր է կառուցողական աշխատանք այդ հարթութիւնում: Վերջին շրջանում կապերը ընդհատուել են այդ հարթակի մասով», - ըսաւ Գրիգորեան:

Տարածաշրջանի բոլոր տնտեսական եւ փոխադրային կապերը ապաշրջափակելու նպատակով՝ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի փոխվարչապետներու նախագահութեամբ եռակողմ աշխատանքային խումբ ստեղծելու համաձայնութիւն ձեռք բերուած էր Յունուար 11-ին՝ Մոսկուայի մէջ երեք երկիրներու ղեկավարներու հանդիպման արդիւնքներով:

«Վստահեցնում եմ, որ «միջանցքային տրամաբանութեան» հարցեր հայկական կողմը չի քննարկել եւ չի քննարկելու եւ հնարաւոր էլ չէ քննարկել նման հարց: Եթէ միջանցք ասելով՝ որոշ մարդիկ



ՀՀ փոխվարչապետի պաշտօնակատար՝ Մհերի Գրիգորեան

նկատի ունեն փոխադրային ուղիներ, մի հարց է, սակայն, եթէ միջանցք ասելով ի նկատի ունեն ինքնիշխանութեան հետ կապուած որեւէ աստիճանի որեւէ ազդեցութիւն, վստահեցնում եմ, որ դա բացառուում է իմ քննարկումների ընթացքում», - ըսաւ Գրիգորեան:

Ան վստահեցուց, որ կամ կ'ըլլայ ապաշրջափակում՝ հայկական ինքնիշխանութեան լիարժէք ենթակառուցում քննարկ օգտագործմամբ կամ չ'ըլլար:

Անդրադառնալով վերջերս գերեվարուած 6 հայ զինծառայողի մասին փոխվարչապետի պաշտօնակատարը վստահեցուց, որ չկայ առիթ մը կամ հանդիպում մը, հնարաւորութիւն, ուր այդ հարցը չի քննարկուիր կամ պիտի չի քննարկուիր: Ան յոյս յայտնեց, որ այդ հարցը շուտով լուծում կը ստանայ:

Շարլ Միշել Ողջունած Է Հայկական Կողմի Հարցերը Խաղաղ Գնահատարժող Լուծելու Դիրքորոշումը



Նիկոլ Փաշինեան Շարլ Միշելի Եւրոպական խորհուրդի կեդրոնէն Գերա

Յունիս 2-ին, Աշխատանքային այցելութեամբ Պրիւքսել գտնուող վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան Եւրոպական խորհուրդի նախագահ՝ Շարլ Միշելի հետ հանդիպման ընթացքին մանրամասնութիւններ ներկայացուցած է հայ-ատրպէյճանական սահմանին ստեղծուած իրավիճակի վերաբերեալ:

Վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութիւնը, ընդգծելով Հայաստանի ինքնիշխան տարածքէն ատրպէյճանական գիւնուած ուժերու ելման դիրքեր դուրս գալու անհրաժեշտութիւնը, յայտնած է, որ Փաշինեան տեղեկատուութիւն ներկայացուցած է այդ ուղղութեամբ կատարուող դիւանագիտական ու բանակցային գործողութիւններուն վերաբերեալ, ինչպէս նաեւ իրավիճակի հանգուցալուծման ուղղութեամբ իր կողմէն Մայիս 27-ին ՀՀ Անվտանգութեան խորհուրդի նիստին ներկայացուած առաջարկին վերաբերեալ:

Վարչապետի պաշտօնակատարը կարեւորութիւն տուած է միջազգային հանրութեան կողմէ Ատրպէյճանի սադրիչ գործողութիւններուն համարժէք արձագանգելու անհրաժեշտութիւնը, հայ ռազմագերիներու վերադարձի ապահովման ուղղութեամբ քայլերու իրականացումը եւ ողջունած Եւրոպական խորհրդարանի կողմէ ընդունուած բանաձեւը, որով Ատրպէյճանէն կը պահանջուի անյապաղ եւ առանց նախապայմաններու ազատ

արձակել բոլոր հայ ռազմագերիները:

Եւրոպական խորհուրդի նախագահը ողջունած է հայկական կողմի՝ հայ-ատրպէյճանական սահմանին առկայ ինդիքը խաղաղ եւ քաղաքական ճանապարհով լուծելու դիրքորոշումը ու յայտնած ԵՄ-ի պատրաստակամութիւնը օժանդակելու այդ գործընթացին:

Ըստ պաշտօնական հաղորդագրութեան՝ անոնք քննարկած են Հայաստան-ԵՄ համագործակցութեան ընթացքը, այս տարուայ Մարտ 1-էն ուժի մէջ մտած Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի ծիրէն ներս նախատեսուող ծրագիրները, մասնաւորապէս, մեր երկրի համակարգային բարեփոխութիւններու եւ ժողովրդավարութեան ամրապնդման միտումը համատեղ միջոցառումներն ու գործողութիւնները:

Շարլ Միշել ողջունած է վերջին երեք տարիներու ընթացքին Հայաստանին մէջ մեկնարկած բարեփոխութիւններն ու ժողովրդավարութեան ամրապնդման ուղղութեան քայլերը: Այս առումով, Եւրոպական խորհուրդի նախագահը կարեւորած է Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի արդիւնաւէտ իրագործումը՝ շեշտելով ԵՄ-ի պատրաստակամութիւնը՝ աւելի խորացնելու եւ ընդլայնելու գործակցութիւնը ՀՀ կառավարութեան առաջնահերթութիւններու կեանքի կոչման գործով:

2021-ի Առաջին Հինգ Ամիսներուն Ապահովուած Է 1.9 Միլիառ Տոլար Հարկային Եկամուտ

2021 թուականի Յունուար-Մայիս ամիսներուն, Հայաստանի պետական եկամուտներու կոմիտէի (ՊԵԿ) կողմէն ապահովուած է 618,4 միլիառ դրամ (մօտ 1,19 միլիառ տոլար) համախառն հարկային եկամուտ: ՊԵԿ-ի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու բաժնի հաղորդագրութեան համաձայն՝ անցեալ տարուայ նոյն ժամանակաշրջանին ցուցանիշը կազմած է 583,6 միլիառ դրամ, իսկ 2019-ին՝ 571,2 միլիառ դրամ: Այսպիսով, նախորդ տարուայ նոյն ժամանակաշրջանի համեմատ պետական պիւտձէի համադրելի եկամուտներու աճը կազմած է 34,7 միլիառ դրամ կամ 5,9 տոկոս, իսկ 2019-ի Յունուար-Մայիս ամիսներու համեմատ՝ 47,2 միլիառ դրամ կամ 8,3 տոկոս:

Նիկոլ Փաշինեանի Դանդիպունը Ֆրանսայի Դայ Դամայնքի Ներկայացուցիչներուն Դետ



Նիկոլ Փաշինեան Փարիզի Դայաստանի դեսպանութենէն Գերս հանդիպած Կ'ուճեմայ հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ

Վարչապետի պատճենակատար՝ Նիկոլ Փաշինեանի Փարիզի մէջ Հայաստանի դեսպանութենէն ներս հանդիպած է Ֆրանսայի հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ, որոնք գործունէութիւն կը ծաւալեն տարբեր բնագաւառներու մէջ:

ցախեան 44-օրեայ պատերազմի հանգամանքներուն, հայ-ատրպէյ-ճանական սահմանին ստեղծուած իրավիճակի հանգուցալուծման ուղղուած քայլերուն, ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան ծիրէն ներս Լեռնային Ղարաբաղի



Վարչապետի պաշտօնակատարը նախ առանձին հանդիպում ունեցած է Ֆրանսայի հայկական կազմակերպութիւնները համակարգող խորհուրդի համանախագահ՝ Արա Թորանեանի եւ Իոզաբաբաճուներու խորհուրդի անդամ, Ֆրանսայի տեղական մարմնի ատենապետ՝ Պետրոս Թէրզեանի հետ:

հակամարտութեան կարգաւորման բանակցային գործընթացի վերականգնման, Սփիւռքի ներուժի լիարժէք իրացման հնարաւորութիւններուն: Վերջինիս հետ կապուած Նիկոլ Փաշինեան բարձր գնահատած է սփիւռքահայութեան համախմբուածութիւնը յատկապէս պատերազմի օրերուն եւ հայրենիքին ցուցաբերած անգնահատելի օժանդակութիւնը:

Վարչապետի պաշտօնակատարը հանգամանալից պատասխանած է Ֆրանսահայերը հետաքրքրող բոլոր հարցերուն:

26 Քաղաքական Ուժեր Կը Մասնակցին

Շարունակուած էջ 1-էն

նակցութիւն չէր եղել: Մինչ այդ կը դժուարանամ յստակ դատողութիւն անել»:

Մասնակից քաղաքական ուժերու մեծ թիւի պատճառով կ'աւելնան ընտրութիւններու կազմակերպման ծախսերը, օրինակ՝ պայմանաւորուած քուէաթերթիկներու տպագրութեամբ, ըսած է ԿԼՅ-ի նախագահը. «Հիմա հաշուարկն իրականացուած է, այստեղ հիմնական ծախսի աւելացումը պայմանաւորուած է լինելու քուէաթերթիկներու տպագրութեամբ, դրանց տեղափոխմամբ, որովհետեւ նախապէս երբ ծրագրուած էր, ծրագրուած էր աւելի քիչ մասնակցութեան թիւ, իսկ մեր Ընտրական օրէնսգիրքն այսպիսին է, որ իւրաքանչիւր կուսակցութեան համար

պէտք է տպագրուի առանձին քուէաթերթիկ: Նշանակուած է՝ մենք տեղամասային կեդրոններում ունենալու ենք կուսակցութիւնների եւ դաշինքների թուին հաւասար, այսինքն՝ 26 քուէաթերթիկ: Դրանք լինելու են առանձին քուէաթերթիկներ, ընտրողն ստանալու է այդ քուէաթերթիկները, դրանցից ընտրելու է իր նախընտրած կուսակցութեան կամ դաշինքի քուէաթերթիկը, այն տեղադրելու է ծրարի մէջ, մնացած քուէաթերթիկները զցելու է արկղի մէջ, որը կը լինի տեղադրուած խցերում: Բնական է, եթէ կուսակցութիւնների թիւը մեծ է, հետեւաբար տպագրող քուէաթերթիկների թիւն էլ է մեծանալու: Ի հարկէ, նաեւ պէտք է նկատել, որ այդ քուէաթերթիկները տպագրելուց յետոյ դրանք պէտք է տեղափոխել տարած քային

Արտակ Բեգլարեան՝ Արցախի Վարչապետ

Արտակ Բեգլարեան նշանակուած է Արցախի պետական նախարար (վարչապետ), Կրիկորի Մարտիրոսեան, իր դիմումի համաձայն երէկ՝ Յունիս 1-ին ազատուած է այդ պաշտօնէն:



Արցախի պետական նախարար Արտակ Բեգլարեան

Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան այսօր, նախարարութեան աշխատակազմին ներկայացուցած է նոր պետական նախարարը՝ նշելով, որ Բեգլարեան պիտի համակարգէ աշխատանքի, ընկերային եւ գաղթականներու հարցերու, առողջապահութեան, արդարադատութեան, կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ մարզանքի նախարարներու գործունէութիւնը, ինչպէս նաեւ Սահմանադրութեամբ նախատեսուած օրէնսդրական բարեփոխութիւններու ընթացքը:

Արտակ Բեգլարեան եղած է Արցախի մարդու իրաւունքներու պաշտպանը: Ան 2020-ի Դեկտեմ-

բերի վերջին հրաժարած է այդ պաշտօնէն, ապա նշանակուած Արցախի նախագահի աշխատակազմի ղեկավար:

Ատրպէյճանական Ուժերը Պէտք Է Դուրս Գան

Շարունակուած էջ 1-էն

Մաքրոն անդրադարձաւ թէ Փաշինեանի հետ խօսած են նաեւ տնտեսական համագործակցութեան հարցերու մասին, օգնելու Հայաստանին զարգացնել ենթակառուցուածքները:

Ճշմարտութեան լեզուով, եւ այդ ձայնը լսելի է եղել ամբողջ աշխարհում, եւ սա շատ կարեւոր է մեզ համար: Ուզում եմ ընդգծել, որ Ֆրանսան եւ նախագահ Մաքրոնն այդ յանձնառութիւնը շարունակում է, եւ սա չափազանց կարեւոր է մեր տարածաշրջանի ճգնաժամային իրավիճակները յաղթահարելու առումով», - ըսաւ վարչապետի պաշտօնակատարը՝ շարունակելով. «Կարեւորում ենք Ֆրանսայի դերը՝ որպէս ԵԱՀԿ Մինսքի համանախագահող երկիր, եւ չափազանց կարեւոր է համանախագահութեան գործունէութիւնը Լեռնային Ղարաբաղի հարցի կարգաւորման եւ տարածաշրջանային ճգնաժամերի կարգաւորման, երկարատեւ խաղաղութիւն եւ կայունութիւն հաստատելու գործում»:

«Եւ դժուար ժամանակներուն Ֆրանսան հաստատակամ է, որ ի վերջոյ խաղաղութիւն կը հաստատուի տարածաշրջանին մէջ», ըսաւ մաքրոն:

Նիկոլ Փաշինեան իր հերթին շնորհակալութիւն յայտնեց հիմանուէլ Մաքրոնին եւ Ֆրանսային իր ջանքերու համար եւ նաեւ կրկնեց առաջարկը՝ իր Ֆրանսացի պաշտօնակիցը հրաւիրելով Հայաստան:

«Ֆրանսան ու Հայաստանն ունեն առանձնաշնորհալ յարաբերութիւններ, եւ շատ կարեւոր է արձանագրել, որ այս ընթացքում հայ ժողովուրդը, ՀՀ-ն մշտապէս զգացել է Ֆրանսայի աջակցութիւնը եւ նախագահ Մաքրոնի անձնական աջակցութիւնը: Շատ կարեւոր հանգամանք եմ ուզում ընդգծել, որ նախագահ Մաքրոնը մեր տարածաշրջանում ճգնաժամի մեկնարկի առաջին օրից խօսել է

Փաշինեան իր ուրախութիւնը յայտնեց այսպիսի շփման հնարաւորութիւն ունենալու համար, եւ համոզմունք արտայայտեց, որ այսօրուայ քննարկումները կը ծառայեն ի շահ երկու երկիրներու բարեկամութեան, տարածաշրջանի անվտանգութեան եւ կայունութեան:

Յոգնած Ենք Ամէն Տարի Սպասելէ

Շարունակուած էջ 1-էն

կայսրութեան օրերուն 1915-ին տեղի ունեցած իրադարձութիւնները» վերաբերեալ. «Մենք յոգնած ենք ամէն տարի Ապրիլի 24-ին սպասելէն, թէ ինչ պիտի ըսէ Միացեալ Նահանգները հայերու մասին այս անգամ: Արդեօ՞ք ԱՄՆ-ը այլ մտահոգութիւններ չունի, բացի այն, թէ ինչպէս հանդէս գայ որպէս հայերու փաստաբան: Թող պատմաբանները զբաղին այս հար-

ցով », - ըսած է էրտողան:

Ան քննադատած է ճօ Պայտըր-նի վերջերս ըրած յայտարարութիւնները Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ: «Ի՞նչ է, անոնք, որոնք անոնցմէ առաջ ղեկավարած են ԱՄՆ, աւելի քիչ տեղեկութիւններ ունէին այս հարցի շուրջ, քան Պայտըրնի գրասենեակը: Ինչու՞ անոնցմէ որեւէ մէկը չէ օգտագործած այդ արտայայտութիւնը (ցեղասպանութիւն)», - աւելցուցած է Թուրքիոյ նախագահը:

ընտրական յանձնաժողովներ, այսինքն՝ մի բան է, երբ նախապարտասուում է օրինակ՝ 40 միլիոն քուէաթերթիկ, մէկ այլ բան է, երբ նախատեսուած է 70-ից աւելի միլիոն քուէաթերթիկ»:

Այժմ հաշուարկներ կը կատարուին եւ կ'ակնկալուի, որ վաղը ԿԼՅ նիստէն յետոյ կը հրապարակուի, թէ որքան գումար կը պահանջուի այս ընտրութիւններուն:

www.massisweekly.com
Updated Every Friday

Հանրապետութեան Ղեկավարները Այցելած են Սարդարապատ



Հայաստանի Առաջին Հանրապետութեան հռչակման 103-րդ տարեդարձի կապակցութեամբ այսօր՝ Մայիս 28-ի վաղ առաւօտեան Սարդարապատի յուշահամալիր այցելած են վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան, նախագահ՝ Արմէն Սարգսեան, Ազգային ժողովի նախագահ՝ Արարատ Միրզոյեան, պաշտօնատար այլ անձինք, եւ յարգանքի տուրք մատուցած Սարդարապատի հերոսամարտին զոհուածներու յիշատակին:

Հանրապետութեան օրուայ առթիւ իր արտասանած խօսքին մէջ Փաշինեան ըսաւ. «Դժուար պահերին հայ ժողովուրդը մշտապէս կարողացել է համախմբուել, լինել մի բռունցք, բոլոր ուժերն ուղղել յանուն պաշտպանութեան, յանուն ինքնիշխանութեան եւ պետականութեան:

Համոզուած եմ, այսօր էլ պէտք է գործենք նոյն ոգով, Երեւանից մինչեւ սահմանապահ գիւղեր լինենք որպէս մէկ ընտանիք՝ ի շահ մեր սիրելի Հայրենիքի անվտանգութեան ապահովման:

Մենք մեր սթափ ու հաւասարակշիռ որոշումներով, հաստատակամութեամբ կանգնած ենք եւ կանգնելու ենք մեր պետութեան, ինքնիշխանութեան, անկախութեան դիրքերում եւ թոյլ չենք տալու թշնամուն հասնել իր նպատակներին:

Մեր ինքնիշխանութիւնն ու անկախութիւնը քննարկման առարկայ չեն:

կայ լինել չեն կարող: Եւ ինչպէս Արամ Մանուկեանն էր 1918-ի յուսահատութեան օրերին ասում՝ «Դէպի գործ եւ աշխատանք, ու յաղթողը մենք ենք լինելու»:

Ստեղծուած իրավիճակի հանգուցալուծումն այսօրուայ մեր առաջնային խնդիրն է, որից յետոյ, անկասկած, հայ ժողովուրդը քայլելու է մեր երազանքների Հայաստանի կերտման ճանապարհով: Ուստի միասին դէպի գործ եւ աշխատանք»:

Նախագահ՝ Արմէն Սարգսեան իր խօսքին մէջ ըսաւ. «Անկախ պետականութիւնը մեր ինքնութեան ու ազգային շահի գիտակցումն է, յանուն որի ի գէն էր ելել մեր ժողովուրդը՝ բանակն ու աշխարհագործն աւելի քան 100 տարի առաջ: Դրա կարիքը կայ բոլոր ժամանակներում՝ ինչպէս Հայաստանի առաջին հանրապետութեան օրօք էր, այնպէս էլ այսօրուայ Հայաստանի հանրապետութեան ժամանակ, եւ դրա կարիքը կը լինի նաեւ վաղուայ Հայաստանի Հանրապետութիւնում:

Անկախ պետականութիւնը մեր սահմանների անձեռնմխելիութիւնն է ու անսակարկելիութիւնը, որոշում կայացնելու եւ այն իրագործելու մեր կարողութիւնը, անվտանգութիւն ապահովելու եւ խղաղութիւն թելադրելու մեր ունակութիւնը:

Մենք պէտք է կարողանանք ոչ միայն յաղթել, այլեւ խորութեամբ

Հայաստանի Ժողովուրդի Տրամադրութիւնները

Շարունակուած էջ 1-էն

եթէ նայինք միւս կուսակցութիւններուն, ապա կը տեսնենք որ, անոնք բոլորն ալ 1 տոկոս կամ աւելի նուազ վարկանիշ ունին:

Ուշագրաւ տուեալներու շարքին է այն, որ Հայաստանի նախկին երեք նախագահներու հակավարկանիշը շատ աւելի բարձր է, քան անոնց նկատմամբ ժողովուրդի ունեցած համակրանքը: Սերժ Սարգսեանի նկատմամբ հակակրանք ունի հասարակութեան 49 տոկոսը, Ռոպերթ Քոչարեանի նկատմամբ՝ 42 տոկոսը, իսկ Լեւոն Տէր Պետրոսեանի նկատմամբ 41 տոկոսը: Նիկոլ Փաշինեանի հակավարկանիշը 20 տոկոս է:

Հարցախոյզի այլ տուեալներու շարքին է արտագաղթի նկատմամբ քաղաքացիներու մօտեցումները: 75 տոկոսը յայտնած է թէ ծրագիր չունի մշտական հեռանալու Հայաստանէն: 22 տոկոսը պատասխանած է՝ այո եթէ կարելիութիւն ստեղծուի:

Երկրի դիմագրաւած գլխաւոր մարտահրաւերներու շարքին յիշուած են յաջորդաբար՝ ներքաղաքական ապակայունութիւնը, պատերազմի գերիներու հացը եւ տնտեսական վիճակն ու անգործութիւնը:

Հակառակ պատերազմի արդիւնքէն, ժողովուրդի 75 տոկոսը կը շարունակէ վստահութիւն ունենալ Հայկական բանակին նկատմամբ:

Յեղափոխական կառավարութեան գլխաւոր ձախողումը

եղաւ դատական համակարգէն ներս բարեփոխումներու իրականացման հարցը: Այդ է պատճառը, որ հարցախոյզին մասնակցողներու միայն 20 տոկոսը վստահութիւն յայտնած է դատարաններու նկատմամբ: Աւելին, 40 տոկոսը կը կարծէ, որ Հայաստանի դատական համակարգը կախեալ է նախկին իշխանութիւններէն, իսկ 39 տոկոսը հակառակը՝ համոզուած է, որ դատական համակարգը գործող իշխանութիւններու ազդեցութեան տակ է: Այսպիսով, մօտ 80 տոկոսը կասկածի տակ կ'առնեն դատարաններու անկախութիւնը, որ կարելորագոյն գործօններէն մէկն է ժողովրդավարական պետութեան հաստատման ուղղութեամբ:

Հարցախոյզին մասնակցողներու 43 տոկոսի կարծիքով՝ Հայաստան կը գտնուի ճիշդ ուղղութեան վրայ: Այս տեսակէտին հետ համաձայն չեն 20 տոկոսը:

Վերջապէս, գալով Քորոնա ժահրի նկատմամբ վերաբերմունքին, քաղաքացիներու ճնշող մեծամասնութիւնը՝ 71 տոկոսը չի փափաքիր պատուաստուիլ, ինչ որ կը նշանակէ թէ վարակը յաղթահարելու համար բացատրական ու դաստիարակչական բաւարար աշխատանքներ չեն տարուիր՝ ժողովուրդի վերաբերմունքին մէջ բեկում յառաջացնելու համար:

Այս բոլոր տուեալները ի՞նչ ազդեցութիւն կ'ունենան յառաջիկայ ընտրութիւններու արդիւնքներուն վրայ, ի յայտ կու գան մօտ ապագային:

«ՄԱՍԻՍ»

հասկանալ, թէ ինչպէս վարուել այդ յաղթանակի հետ: Պէտք է կարողանանք յաղթա-

նակը լցնել մնալուն բովանդակութեամբ ու վերածել յաջողութիւնների»:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :-----
 Email: -----

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
 ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Announces the opening of the
2021 AEBU Scholarship Program
 Empowering Our Youth for a Brighter Future

To apply, visit our website
WWW.AEBU.ORG

APPLY NOW
 Through June 31, 2021

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

626•344•7321
 AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE
 1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

France's Macron Demands Withdrawal of Azeri Troops From Armenia



կու թիւ): Պէտք է ընդգծել որ իր ժանրը առօրեայ հրատարակագրութիւնը կամ ընթացիկ հարցերը չեղան, այլ՝ բժախնդիր ուսումնասիրութիւններ, ժամանակ եւ պրպտում պահանջող յօդուածներ, գրախօսականներ, գրադատականներ, որոնք ունեցան մնայուն արժէք՝ ի մասնաւորի բանասիրութեան եւ մամուլի պատմութեան շուրջ: Գրատարածութիւնը իր կեանքի առաքելութիւնն էր կարծէք եւ այդ առումով խմբագրեց բազմաթիւ գործեր, ինչպէս Սարգիս Արմէնի (Փոշոյլեան) «Այգաբաց»ը (1967), Վարդգէս Պետրոսեանի «Հայկական էսքիզներ»ը, Գուրգէն Մահարիի «Մաղկած Փշաւներ»ը, Բագրատ Ուլուբաբեանի «Սարգարա պատ»ը, Գառնիկ Աղաբաբեանի երկհատորեակը (1988 եւ 1991, գործակցութեամբ Արմէն Դարեանի եւ Թորոս Թորանեանի) եւ այլն: Կարեւորութեամբ պէտք է յիշել նաեւ Պէպօ Միմոնեանի հետ խմբագրած «Վահրիճ ձէրէճեան կեանքին եւ Մտածողութեան Ընդմէջէն» (2007) գիրքը եւ Արմէն Դարեանի բանաւոր խօսքին մէկտեղումը՝ «Մատենա Բանաւոր Խօսքի» (2012): Վերջին տարիներուն ան մեծ ներդրում ունեցաւ Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ հայկական բնօրրաններու յուշամատեններու խմբագրութեան եւ վերահրատարակութեան մէջ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ: Իւրաքանչիւր հաստատու հատոր անցաւ իր սրբերի աչքերէն: Պէտք է հաստատել, որ իր ուսումնասիրութիւնները արդիւնքը եղած են բժախնդիր եւ բարեխիղճ հետեւողական աշխատանքի: Հետաքրքրական էր իր 2018-ին հրատարակած «Մատենագիտութիւն Ընդդէմ Յանկազրուածի» հատորը, ուր կը նշէ մատենագիտական աշխատանքին լրջութիւնը, մեթոտը եւ մանրամասնօրէն փորփրելու կարեւորութիւնը:

Ժիրայր Դանիելյանի գործերէն յիշենք՝ «Ակնարկ Լիբանանահայ Մամուլի Պատմութեան» (1973), «Հայ Մամուլի Հաւաքածոյ» (1974), «Սփիւռքահայ Նոր Պարբերական Մամուլը 1967-1980 Թուականներուն» (1981), «Ռամկավար Ազատական Մամուլը» (1982), «Հայ Նոր Պարբերական Մամուլը 1967-1981» (1984), «Լիբանանահայ Տպագրութիւնը Պատերազմի Տարիներուն 1975-1984» (1986), «Բանասիրական Որոնումներ» (1996), «Գրական Որոնումներ» (2007), «Բանասիրութեան Բաւիղներուն Մէջ» (2011, Երեւան):

«Իմ Թատերական Ուղեւորութիւնը՝ Յիշատակարան Մը» Զեղինակ՝ Գրիգոր Սաթամեան



Գ. ՍՈՒՆՅԵԱՆ

Լոս Անճելոսի մէջ այս օրերուն լոյս տեսաւ սփիւռքահայ վաստակաշատ եւ տաղանդաւոր դերասան, բեմադրիչ եւ թարգմանիչ Գրիգոր Սաթամեանի «Իմ Թատերական Ուղեւորութիւնը՝ յիշատակարան մը» գիրք-ալպոմը (My Theatrical Journey: A Memoir):

Անգլերէն լեզուով լոյս տեսած հրատարակութեան մեկնեանն է քաղաքի ծանօթ անձնաւորութիւններէն՝ Տիար Նազարէթ Գեւորեան: 140 էջերէ բաղկացած սոյն գեղատիպ տպագրութեան մէջ՝ ընթերցողը մօտէն կը ծանօթանայ տաղանդաւոր հեղինակի կենսագրութեան տարբեր հանգրուաններուն: Կը սկսի իր ծնողներէն Արամ եւ Վերժին Սաթամեաններէն, որոնց յիշատակին ձօնուած է իր աշխատասիրութիւնը:

Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «Չկայ չարիք որմէ չի ծնի բարիք»...: Այդ եղած է այս ալպոմի հրատարակութեան ողբասկանը: Արդարեւ հատորի նախաբանին մէջ Սաթամեան կը խոստովանի որ քորոնա համավարակի սահմանափակումները՝ պատճառներէն մին էր, որ ինք հարկադրաբար սկսէր, ի կատար ածելու իր թատերական ուղեւորութեան այս յիշատակարանը:

Շուրջ տասն յինթափորագիրներու բաժնուած սոյն աշխատասիրութիւնը ճոխացուած է աւելի քան 130 յիշատակելի նկարներով եւ վկայագիրներով, որոնք կը ցոլացնեն մեծ արուեստագէտի թատերական բազմաբեղուն գործունէութեան տարբեր հանգրուաններն ու իր գեղարուեստական գործունէութեան մասին եղած գնահատական արտայայտութիւնները (Պէյրութ, Նիւ Եորք, Լոնտոն, Երեւան, Հոլանտա, Արժանթին):

Սաթամեանի ինքնակենսագրութեան մէջ կարեւորութեամբ կը նշուի ջարդէն վերապրած իր հաճընցի ծնողներու եւ մեծ ծնողներու թուրքիայէն դէպի Լիբանան կատարած գաղթականական աստանդական կեանքի մասին: Յարգանքով եւ հիացումով կը յիշէ Պէյրութի Յովակիմեան-Մանուկեան Երկրորդական վարժարանի իր ուսանողական շրջանին ստացած դաստիարակութիւնը, ուր կոփուած է նաեւ իր նկագիրն ու անհատականութիւնը: Հոն է որ նաեւ սկսած է դրական հակումներ

ունենալ դէպի շարժապատկերը, յատկապէս՝ Չարլի Չեփլինը, որուն ուսումնասիրած է: Այնուհետեւ մաս կազմած է ՀԲԸՄ-ի Թատերական յանձնախումբին: Յետագային անդամակցած է Վահրամ Փափագեանի անուան թատերախումբին, գործակցելով Պոլսէն ժամանած արուեստագէտ՝ Պերճ Ֆալլեանի հետ: 1964ին կը միանայ Լիբանանի նորակազմ «Ժամանակակից թատրոնին» ստանձնելով կարեւոր դերեր:

Գրիգոր Սաթամեան 1964-1965ին Լոնտոնի մէջ կը մասնակցի London School of Film դասընթացին: Անկէ շրջանաւարտ դառնալէ ետք կը հետեւի մասնագիտական այլ դասերու: Մասնաւորաբար Լոնտոնի Օլդ Վիկ Կոլեջի կողմէ հիմնուած The British Old Vic Theater School-ին: Քանի մը տարի Լոնտոն մնալով կը հմտանայ թատերական արուեստի գանազան բաժանմունքներուն մէջ, արժանանալով Old Vic-ի տնօրէնութեան բարձր գնահատանքին:

Միացեալ Նահանգներ փոխադրուելով եւ Գալիֆորնիա հաստատուելէն ետք Գրիգոր Սաթամեան տեղագին լծուեցաւ թատերական աշխույժ գործունէութեան, ՀԲԸՄ «Արտաւազ» թատերախումբը իր բեմադրութեամբ ներկայացուց բարձրորակ թատերգութիւններ: Անոնցմէ ոմանք իր թարգմանութեամբ միջազգային մակարդակով բիէսներ են: «Արտաւազ» թատերախումբն իր գործած մասնակցութիւնը բերաւ նաեւ Լարք Երաժշտանոցի մեծ ծրագրին, միասնաբար ներկայացնելով հայկական հռչակաւոր օփերեթներ («Զուարթ», «Լէպլէպլի Նոր-Նոր Աղա» եւ «Զամիրէ») բեմադրութեամբ Գրիգոր Սաթամեանի:

Վաստակաշատ արուեստագէտը տասնեակ տարիներու իր բերած մեծ ներդրումին համար՝ 2017ին արժամացաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Սբ. Սահակ - Սբ. Մեսրոպ» շքանշանին եւ թատերախումբն ալ վերանուանուեցաւ իր անունով «ՀԲԸՄ-ի Գրիգոր Սաթամեան Թատերախումբ»:

Գրիգոր Սաթամեան ներկայիս կը պատրաստուի նոր բիէսի մը բեմադրութեան, որուն արգելիչ պատճառը քորոնա համավարակն է: Թատերախումբը 40-ամեակին առթիւ Պերճ Չոլաքեանն ըսած է. «Միւրեքի Գրիգոր, տարիներու ըն-

230 Տարեկան Մատեանը Հնատիպ Ձեռագ Շարակնոցը Կ. Պոլիս 1790 Ի Հայրապետութեան Տեառն Ղուկասու Ամենայն Հայոց Կաթողիկոսին



ԴՈԿՏ. ԶԱԻԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Մուտք

Հնատիպ 22 գիրքերու մէջ աչքառու է հնագոյնը՝ ԺԸ դարու Ձեռագ Շարակնոցը իր ետին գտնուող Յիշատակարանով, ինչպէս նաեւ Շարակնոցին յաջորդ տպագրութիւնը 1850 թուին, երկուքն ալ տպագրուած Կ. Պոլիս: Երրորդ հրատարակութիւն մը եւս ունիմ Երուսաղէմ հրատարակուած 1936 թուին:

Ներկայ գրութեամբ կ'ուզեմ նախնազոյն տպագրուած Հայաստանեայց Եկեղեցւոյ սոյն Շարակնոցը ներկայացնել որ հաւանաբար գոյութիւն ունեցող հնագոյն տպագրութիւնն է դատելով իր յաւելեալ բացատրողական բովանդակութիւններէն, եւ մանաւանդ հնօրեայ մանրանկարչութեանց եւ խորաններու առաջին շատ նախնական տպագրեալ վերարտադրութիւններէն: Սրբազան այս մատեանը ունի իր հարազատ տախտակեայ կաշեպատ կողքն ու կազմը: Իմ կարծիքով Շարակնոցի յետագայ հրատարակութիւնները հիմնուած են այս նախնազոյն Շարակնոցին վրայ՝ իր հարազատ խազերով, այն տարբերութեամբ որ շատ բառեր սղուած են ու «պատիւ» ի նշաններով միայն ընթեռնելի որուն նպատակը յայտնապէս էջեր խնայելու պահանջը եղած է:

Հնատիպ Շարակնոցը

230 տարիներ առաջ տպուած այս եկեղեցական մատեանը իր կատարեալ վիճակին մէջ հասած է ինծի 1955 թուականին, ոչ մէկ էջ ինկած ըլլալով 832 էջոց եւ 17x13x6 սմ. խորանարդ չափերով գիրքէն: Ճակատին գրուած է «Ի Հայրապետութեան Գերագահ Աթոռոյն Ս. Էջմիածնի Տեառն Ղուկասու Սրբազան Կաթողիկոսի Ամենայն Հայոց», չիշելով նաեւ Երուսաղէմի Պատրիարքը «Տէր Յովակիմ Երջանկափայլ Վարդապետն ու Կ. Պոլսոյ Արքայանիստ քաղաքիս Տեառն Զաքարիա Ազգասէր եւ Կարդացեալ Աստուածաբան Պատրիարքը»: Տպագրութեան հայկական թուականը միայն տրուած է ՌՄԼԹ (Քրիստոսի 1790 թուականը), նոյնմբերի ժա (11) ի յաւելումով, «Ի տպարանի Յօհաննիսի եւ Պօ-

ղոսի»: Ղուկաս Կարնեցի Ամենայն Հայոց Կաթողիկոս գահակալած է 1780-1799:

Շարակնոցը կը բացուի հեղինակներու անուններու շարքով մը, ոմանք աւանդաբար վերագրուած, եւ ուրիշներ ճշգրտութեամբ հաստատուած, երբեմն անորոշ են թաղութիւններով, «ոմանք» այս անուն հեղինակին կողմէ, եւ «այլք»՝ ուրիշներու: Ամենէն յայտնին անոնցմէ անշուշտ Ս. Ներսէս Ծնորհալի Կլայեցի Հայրապետն է որ գերազանց գրողն ու երգողը եղած է մեր շարականներուն, աւելի հին ժամանակներուն ալ՝ Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոսն ու Յովհաննէս Օձնեցի Հայրապետը: Նոյն էջին վրայ Ծնորհալի Հայրապետի անունան կից որպէս իր յօրինումները յանուանէ կը կարդանք նուազագոյնը քսան շարականներ: Իսկ ընդհանուր հեղինակներու թիւը յանուանէ քսանմէկ արձանագրուած է: Անկախաբար առաջին էջի հեղինակներու ցանկէն, Շարակնոցի վերջաւորութեան յատուկ ցանկով մը կրկնուած են հեղինակներուն անունները:

Նկարագարողումները

Զարմանալի կը թուի թէ ինչպէս 230 տարի առաջ սոյն Շարակնոցը գարդարած են հնօրեայ մեր ձեռագիր մատեաններու մանրանկարչութեանց տպագրեալ օրինակներով, խորաններով եւ լուսանցազարդերով, առաջինն անոնցմէ «սերունդներու ծառը», հաստաբուն եւ ճիւղաւորեալ ծառ մը, արմատներուն վրայ բազմած Աբրահամ, Իսահակ եւ Յակոբ Նահապետները, ու գազաթին՝ Աստուածամայրը մանուկ Յիսուսը գրկած: Ծառին ներքեւ բացատրական մըն ալ գրուած՝ «Ի նախահարց սերի խմբից, ծնանի ծնողն փրկչին հաճորից, նախապետ արքիստիս» եւ յակ»:

Առաջին շարականին վերել ինքնատիպ ու տպաւորիչ խորան մը նկարուած է ուղղակի ձեռագիրներէն ընդօրինակուած, գոյգ մը հրեշտակներ փողերը բերաններուն, կը շփոթեն ծնունդը Փրկչին՝ կեդրոնական մեծադիր «է» գիրին շուրջ: Իսկ նոյն էջի լուսանցքին՝ գարդարուն աշտարակ մը՝ գազաթը խաչով պսակուած: Նման պատկերներ շատ

յաճախողէպ են՝ ըստ տուեալ շարականի նիւթին ու բովանդակութեան: Հետաքրքրական է Բուն Բարեկենդանի «Բանն որ ընդ չօր» շարականի նախորդ էջին Ադամ եւ Եւայի եւ գիտութեան ծառի լրիւ նկարը՝ կենդանիներու եւ ծառաստանի խճողուածքով, որուն ներքեւ կը կարդանք. «յօձն եւս եղի պատրեալ եւ եւայէ ադամ պարտեալ ուստի զպտուղն ճաշակեալ եւ ի դրախտն արտաքսեցեալ»:

Խազագրութիւնը

Շարակնոցի ետին մանրամասն բովանդակութեան ցուցակէն ետք կը գտնենք ամէն բառի վրայ երեւցող խազերուն երաժշտական համարժէքը եղող շեշտաւորումներու ցանկը որոնք առանձինն կուտան եղանակին ճշգրտութիւնը: Յանկագրուած խազերուն անուններ տրուած են եւ հարկ էր անշուշտ միշտ չիշել ու կրկնել անոնց ձայնային արժէքը ամէն անգամ որ անոնք կը կրկնուէին բոլոր բառերուն վրայ անխտիր, ներկայացնելով շատ բժախնդիր եւ բարդ դրութիւն մը:

«Անուանց խազից շարականաց» վերնագրին տակ բացատրուած են շեշտերով, ոլորակներով, կրկնակարներով, խէկործ եւ ձակործ նշաններով ու պարօկներով, ընդամէնը 24 խազեր, ճշգրտով անոնց դերն ու ձայնային համարժէքը եղանակը: Յետագային յայտնի երաժշտագէտներ մինչեւ Կոմիտաս Վարդապետ հետամուտ եղած են խազագրութեան եղանակներուն, վերլուծած զանոնք ու եւրպական ձայնագրութեամբ իրենց լրումին հասցուցած:

Շարականներուն Ընդհանուր թիւը՝ 1812

Միայն նախնազոյն այս տպագրութեան մէջ կը կարդանք «Վասն թուոց շարականացն» վերնագրին տակ ճշգրիտ թիւը ամբողջ շարականներուն՝ անոնց ութ ձայներուն համաձայն: Յետագայ Շարակնոցներուն մէջ չկայ այս պարզ թուացող տեղեկութիւնը որ ցարդ աննկատ թողուած է: Ով պիտի հաշուէր շարականներուն թիւը: Ահա այստեղ մինչ առան-

ձին թիւերով արձանագրուած են Օրհնութիւնները, Հարցերն ու մնացեալները, եզրակացութեան մէջ գրուած է «Լինին բովանդակ շարականք ՌՈԼԵ (1635), առաւել «Հարցք ՃՀԷ (177), եւ միասնաբար ընդհանուր թիւը՝ ՌՊԺԲ (1812):

Յիշատակարան

«Յիշատակարան տպողի» երկու էջերուն վրայ կը կարդանք պատմական եւ տեղագրական արժէք ներկայացնող Յիշատակարան մը՝ անուններով եւ աշխատակցութեամբ: Նախ բարեխօսութիւնը կը խնդրուի Սուրբ Մինասին «որ ետ կարողութիւն եւ յաջողութիւն մեզ նուաստիցս» կատարելութեան հասցնելու Շարականի սոյն վայելուչ տպագրութիւնը «Ի վայելումն մաքուր մանկանց նորոյ սիրոնի»: Յիշատակարանին մէջ կը խնդրուի չիշել «զհանգուցեալ հայրն իմ զմահտեսի Աստուածատուրն եւ զիս՝ գորդի նորին Յովհաննէս»: Նաեւ կը յիշատակուին տիրացու Պողոսն ու տիրացու Յարութիւնը՝ Յովհաննէսի որդիները որոնք շարած են կապարեայ գիրերը: Այլ եւ Բալուցի Տիրատուրի որդին տիրացու Զաքարը: Յիշեալ Յովհաննէսն ու Պողոսը տպարանատէրերն էին ինչպէս նշուած է մատեանին սկիզբը:

Եզրակացութիւն

Հնատիպ այս Շարակնոցը ինքնատիպ կը մնայ որքան ատեն որ յաջորդ տպագրութիւնները զանց առած են որոշ տեղեկութիւններ որոնք կարեւոր կը նկատուին: Այս կը նշանակէ նաեւ որ նախնազոյն հրատարակութիւններ անպայման ժամանակավրէպ չեն ըլլար, այլ կ'ընծայեն հնագոյն որոշ մանրամասնութիւններ որոնք կը հարստացնեն մեր գիտութիւնը: Մեր այս նկատողութիւնը կը հիմնենք այն իրողութեան վրայ երբ նկատի կ'ունենանք վերջին հրատարակութիւնները որոնք իրենց աւելի փայլուն եւ աչքառու տեսքով կը հմայեն ընթերցողը եւ սակայն հնաբոյր էջերուն ընծայած միւս հմայքներէն զրկուած կը մնան:

Թուրքիա-Միացեալ Նահանգներ

Շարունակուած էջ 11-էն

եակը:

Կողմնորոշումով հիմնուած քեմալական Թուրքիան գրեթէ գոյութիւն չունի այլեւս:

Թուրքիա, ամէն բանէ աւելի, կ'ուզէ դառնալ ոչ ուրիշէն կախեալ ինքնիշխան հզօր տէրութիւն մը, եւ իր արտաքին այժմուքաղաքականութիւնը կը հիմնաւորէ իր օսմանեան անցեալի աւանդով: Իսկ գինուորական ճարտարարուեստին մէջ անոր արձանագրած յաջողութիւնները առաւել կը խթանեն իրտողանի կայսերական երազները:

Թուրքիոյ մէջ Միացեալ Նահանգներու նախկին դեսպան Ռոպերթ Փիլսոնի համաձայն, Թուրքիա կը ձգտի վերականգնելու իր կայսրութիւնը, եւ իրտողանի կ'ուզէ այդ միջոցառումով 2023-ին նշել Թուրքիոյ Հանրապետութեան հիմնադրութեան 100-ամ-

Միացեալ Նահանգներ-Թուրքիա յարաբերութիւնները միշտ չէ, որ հեզասահ ընթացած են, բայց նաեւ երբեք չեն հասած փոխադարձ անվստահութեան այս մակարդակին: Լարախաղաց էրտողան շատ լաւ սորված է միջազգային խաղերու օրէնքները: Բնականօրէն, Միացեալ Նահանգները աշխարհի միամիտը չէ եւ էրտողանի հետ կը վարուի անոր խաղերուն մէջ արգելքներ դնելու մարտավարութեամբ:

Արդարօրէն պիտի հարց տալ. հայաստանութիւնը ցեղասպանութիւն որակելու նախագահ Պայտընի «քաջութիւնը» կը բխի Միացեալ Նահանգներու բարոյական սկզբունքներէն, թէ մաս կը կազմէ այս երկրին քաղաքական ներքին եւ արտաքին հաշիւներուն եւ էրտողանի խաղերը խանգարելու մարտավարութեան:

Անկախութեան Եւ Ինքնուրոյնութեան Հպարտութիւնը...

«Գրականութիւնը անկախութիւն է, եւ անկախութիւններէն ամենէն մեծը, ամենէն թանկագինը»:

ԳԵՂԱՍ ԲԱՐՍԵՂԵԱՆ

ԴՈՎՏ. ՀՐԱՅՐ ԵՒՊԵՏԵԱՆ

Շատ հետաքրքրական է, երբ բառարան կը գործածեն, բացատրական թէ հոմանշային, որպէսզի բառերուն նշանակութիւնը եւ բացատրութիւնը ստանաս: Բառերուն նշանակութիւնը քեզի առիթ կու տայ ո՛չ միայն հասկնալու, այլ նոյնքան նաեւ ընկալելու եւ իմաստ կերտելու քու հասկացողութեանդ համար:

«Անկախութիւն» բառին բացատրութեան մէջ տեսայ «ինքնավարութիւն», «ազատութիւն», «պետական իշխանութիւն ունեցող» իմաստները: Իսկ հոմանշային բացատրութիւններուն մէջ էն տեսայ «ինքնիշխանութիւն» եւ «ինքնուրոյնութեան» հասկացողութիւնները: Այս բոլորին մէջ էն սկսայ որոնել անկախութեան հասկացողութիւնը եւ ընկալումը իմ կեանքիս համար եւ տարիներու ընթացքին: Թէ ինչպէ՛ս անկախութիւնը եւ անոր հասկացողութիւնը-ըմբռնումը կըրցայ տեսնել, հասկնալ, ընկալել, ինչ որ իմ կեանքիս մէջ ներմուծուեցաւ հետեւողական կրթական-դաստիարակական գործընթացի մը մէջ էն, որ նաեւ ինծի համար կերտեց իմ ինքնուրոյնութիւնս: Թէ ի՞նչ կըրնայ նշանակել հայ եւ ազգային ըլլալ: Եւ որ այս հասկացողութիւնը իմ կեանքիս համար պիտի դառնար ձեւաչափ՝ ապրելու համար անկախ եւ ինքնուրոյն կեանքի մը գիտակցութեան մէջ էն: Տեսայ նաեւ, թէ անկախութիւնը իր ինքնուրոյն բայց նոյնքան համապարփակ տարազով, հայրենիքի եւ անոր աշխարհագրական-հողային սահմաններու կարգավիճակն է ու տակաւին աւելին:

Տեսայ, թէ անկախութեան հասկացողութիւնը դաստիարակութեան արդիւնք էր: Դաստիարակութիւն մը, որ սկսաւ աշակերտական տարիներու ընթացքին՝ սկսելով նախ տան մթնոլորտէն եւ անցնելով դպրոցէն եւ շէշտուած կերպով հայկական դպրոցէն, հասնելով եկեղեցի ու տակաւին: Եթէ ես չունեցայ կուսակցական-միութենական ու ակումբային դաստիարակութեան այդ հոլովոյթը, բայց կարելի չէ չզննատել այս վերջիններուն կարեւոր դերը այս դաստիարակութեան մէջ:

Դպրոցական տարիներուն հայերէնի, գրականութեան, հայոց պատմութեան ու հոգեւոր-Աստուածաշունչի իւրաքանչիւր դասապահի դաստիարակութեան ընդմէջէն, սկսայ տեսնել, թէ ինչպէ՛ս կը կազմաւորուի ազգային անկախութեան, իմա՝ ինքնուրոյնութեան այս նկարագիրը: Անկախութիւնը տեսայ ու սորվեցայ ազգային հայեցակէտի ու ըմբռնումներու հասկացողութիւններուն եւ գիտակցութեան մէջ էն: Թէ ինչպէ՛ս դպրոցական-եկեղեցական այդ դաստիարակութիւնը եղաւ համապարփակ՝ իմ կեանքիս համար կերտելու ինքնուրոյն դիմագիծ մը: Հայ եմ, քրիստոնեայ, եւ ասիկա ինքնուրոյնութիւն մըն է, որ ինծի եւ իմ կեանքիս շնորհեց անկախութիւնս: Անկախութիւնը ազատ ու ճաշասարակչուած մտածողութեան, ինքնութեան, կեցուածքի,

ըմբռնումի, ապրելակերպի եւ համարդկային կեանքի ու աշխարհի մէջ ապրելու գրաւական է: Բայց ոչ միայն ապրելու աշխարհին մէջ իբրեւ մարդ, այլ ինքնուրոյն նկարագիրով հայ մարդ, որ նաեւ իր ներգործմը կ'ունենայ համարդկային ու միջազգային յարաբերութիւններու մէջ էն: Բայց նաեւ սորվեցայ, որ գրաւոր ու բերանացի խօսքը՝ (համեմատելով եւ ներառելով Աստուածաշունչի բացատրութեան մէջ ԲԱՆ հասկացողութիւնը) ընդարձակ ու համապարփակ գրականութիւն է եղեր, շատ աւելին, քան գրական-բանաստեղծական բովանդակութիւնը եւ անոր հասկացողութիւնը: Եւ այս խօսքի, իմա ԲԱՆի գրականութիւնը, շարադրուած եւ համարուած ձեւով կերտեց քրիստոնէական, ազգային, հասարակական, քաղաքական, գիտական, փիլիսոփայական, հրապարակախօսական աւայլ դաստիարակչական գիտութիւններ, որոնք միանալով իրարու հետ ստեղծեցին ինքնուրոյն նկարագիր մը ինծի համար իբրեւ հայ եւ քրիստոնեայ մարդ: Այսօր կ'արժեւորեմ այս «գրականութիւնը» եւ անոր դաստիարակութեան կարեւորութիւնը, որ ինծի համար եղաւ ապրող կեանք մը: Եւ իրաւացի է Գեղամ Բարսեղեանը, երբ կ'ըսէ, թէ գրականութիւնը անկախութիւն է (եւ անկախութիւն կը շնորհէ), եւ աշխարհի մեծագոյնը եւ թանկագինն է եղեր: Որովհետեւ իմս է եւ իմ մէջ կերտեց անկախ, ազատ եւ ինքնուրոյն նկարագրով կեանքի մը հասկացողութիւնը:

Բայց այս անկախ եւ ինքնուրոյն նկարագիրին մէջ պիտի լիցքաւորուէր նաեւ հայրենիք-հող գիտակցութիւնը: Վերջապէս սփիւռքահայ եմ, եւ պիտի ապրէի հողին կարօտը: Հայկական հողը, որ իմս է եւ իմ դիմագիծս է: Հողը, որ նաեւ դարձաւ իմ անկախ եւ ինքնուրոյն կեանք շնորհող ենթահող, անկախ թէ ի՞նչ կարգավիճակի մէջ է հայուն եւ իմ այս հողը: Առաջին հանրապետութիւնը հայկական պետականութեան առաջին կուռնան էր, որուն պատմութիւնը սերտելով իմ հայկական-ազգային դիմագիծս ուրուագծուեցաւ իբրեւ անկախ, ազատ, ինքնուրոյն հայ անհատ: Երկրորդ հանրապետութիւնը, որուն հետ բաւական առնչուեցայ, եթէ չունեցաւ վարչական-պետական ինքնիշխան դրուածք, բայց երբեք չդադրեցաւ սնուցանել իմ հայկական ու ազգային ինքնուրոյն նկարագիրս: Երրորդ հանրապետութիւնը եթէ շարունակութիւնն էր առաջին եւ երկրորդ իրականութիւններուն, բայց պիտի ամբողջացնէր իմ մէջս հպարտութիւնը նոյն այս անկախ եւ ինքնուրոյն նկարագիրիս նկատմամբ: Սկսայ տեսնել եւ սորվել, թէ ինչքան կարեւոր է եղեր հող-հայրենիք իրականութիւնը՝ այս համապարփակ եւ ինքնուրոյն նկարագիրս կերտելու մէջ:

Այս ազգային եւ ինքնուրոյն նկարագիրի կերտումը գերծ չէր մարտահրաւէրներէ: Իբրեւ սփիւռքի մէջ ծնած, մեծցած եւ մինչեւ օրս տարբեր երկիրներու մէջ ապրող հայ մը, ապրեցայ ու տակաւին կ'ապրիմ սփիւռքեան կեանքին

ստեղծած եւ պարտադրած տարբեր հոլովոյթները: Լիբանանի քաղաքացիական պատերազմէն սկսեալ մինչեւ Միջին Արեւելքի տարբեր ու մինչեւ օրս շարունակուող քաղաքական եւ ապահովական ելեւէջները: Հայուն պատմութիւնը մինչեւ օրս միշտ ալ լեցուն եղած է ելեւէջներով: Առաջին հանրապետութիւնը ունեցած է իր տարբեր մտահոգութիւնները: Խորհրդային համակարգին մէջ ուրիշ բնոյթի դժուարութիւններ կային, հասնելով մինչեւ ներկայ օրերու երրորդ հանրապետութիւնը: Այսօր նոյնքան լեցուն է մտահոգիչ տուեալներով:

Կայ մէկ կարեւոր իրականութիւն: Այս «մտահոգիչ տուեալները» իմս են նաեւ, ինչպէս որ են իւրաքանչիւր հայու համար: Այսօր, իմ անկախ ու ինքնուրոյն ազգային ինքնութեան կեանքիս մէջ ունիմ նոյնքան մտահոգիչ տուեալներ: Երեւի պիտի ապրիմ այս տուեալներով, բայց նաեւ աշխատիմ, որպէսզի բարոյ լուծումի մը համար տարուած բոլոր ջանքերուն մէջ իմ մասնակցութիւնս բերեմ: Ինքնուրոյն նկարագիրը՝ անկախութիւնը, ունի նաեւ պատասխանատուութիւն, որմէ կարելի չէ փախչիլ:

Ներկայ օրերու մեր երրորդ հանրապետութիւնը ունի բազմաթիւ մտահոգութիւններ: Չեմ ուզեր ըսել, թէ առաջինը եւ երկրորդը չունէին որեւէ տեսակի հարց: Անպայմանօրէն ունէին, ինչպէս ներկայ օրերու տարբեր հիմնահարցերը: Մեր ներկայ օրերու երրորդ հանրապետութեան մէջ կան ուզումական-քաղաքական տաղանակներ: 44 օրերու արցախեան պատերազմը եւ պարտութիւնը մեզ դրին շատ դժուար իրականութեան մը առջեւ: Մեր հայրենիքի աշխարհաքաղաքական տուեալները նոյնպէս չեն օգներ մեր հարցերուն մէջէն բարոյ ձեւով նաւարկելու: Ստիպուած ենք կատարել քաղաքական թէքումներ եւ համաձայնութիւններ, ընտրութիւններ, ինչպէս նաեւ ազգային իրաւունքները, ինչպէս նաեւ ազգային իրաւունքները, որոնք մեզ նաեւ կը դնէ՝ իբրեւ հայրենիք եւ պետականութիւն, դժուարին ընտրանքներու առջեւ: Արցախեան հիմնահարցի լուծման անհրաժեշտութիւնը նոյնքան դժուարին առաքելութիւն մըն է: Ներկայ օրերու Ազրպէյճան-Հայաստան սահմանային քաշքշուքները ալ աւելի կը բարդացնեն տիրող կացութիւնները:

Բայց այս բոլոր արտաքին առանցքներուն մէջէն կայ մեր ներքին իրավիճակը, որ այսօր, մեղմ ըսած, ոչ համերաշխ մթնոլորտ մը կը պարզէ: Ներքին տագնապները եւ անհամաձայնութիւնները, եւ տակաւին իրարու նկատմամբ անմակարդակ մեղադրանքները եւ ստորանցնող զգվուտոցները հասած են անվայել մակարդակներու: Այսօր ներհայկական մեր



կարգուսարքը կ'ապրի ահաւոր տաղանակ: Տաղանակի այս պատճառը արդիւնք է քաղաքացիական, ազգային, բարոյագիտական ու հոգեւոր դաստիարակութեան եւ կրթութեան մեծ բացակայութեան: Երեսուն տարիներու վրայ երկարած մեր երրորդ հանրապետութիւնը չկրցաւ կերտել համակարգ-պետականութիւն մը, որ քաղաքացիական եւ ազգային առողջ բարոյագիտական հիմքեր ունենար: Հոն, ուր հայ քաղաքացին պիտի ապրի, բայց նաեւ պիտի կերտէ հայրենիքը, հեռու՝ կաշառակերութեան եւ կողոպուտէ: Ընչաքաղցութիւնը եւ «մամոնա»-ի պաշտամունքը մեր արժեքափերը դարձան դժբախտաբար, եւ մենք չկրցանք հիմնել պետականութիւն մը, որ կը վայելէ առողջ եւ տոկուն բարոյական հիմք: Այս իմաստով մենք սկսած ենք սակարկել մեր ազգային ինքնուրոյնութիւնը: Այն ինքնուրոյնութիւնը, որ գլխաւոր երաշխիքն է մեր անկախութեան: Անկախութեան աշխարհագրական, տարածքային, բայց նաեւ ազգային-մշակութային ինքնութիւնները: Պարտինք ընդունիլ, թէ բոլորս «կշռուեցանք եւ պակաս գտնուեցանք» (Դանիէլ 5:27): Պակասաւորը հայրենի պետականութիւն մը հիմնելու գրաւականն է, որ մեծապէս պիտի օժանդակէր, որպէսզի մենք կարենայինք դիմադրաւոր մեր արտաքին բազմապիսի ու բազմատեսակ հիմնահարցերը: Պատմութեան փորձը յստակ է: Ուր կայ ամուր, ներքին եւ լաւ կազմակերպուած պետականութիւն, հոն կայ արտաքին տարբեր հիմնահարցերը դիմադրաւոր վճռակաւ մութիւն եւ կարողականութիւն, անկախ թէ ինչքան է մեր ուժի թուակցին եւ որակական կարողականութիւնը: Ներքին ամուր հիմքը պատուանդան է արտաքին մարտահրաւէրներու դիմաց:

Պէջրութիւն բարեկամ մը ամէն առաւօտ լաւ սովորութեան մը սկսած է՝ ընկերային տեղեկատուութեան ցանցերու միջոցով «բարի լոյս» ըսելու: Եւ իւրաքանչիւր բարի լոյս ունի մեր պատմական Հայաստանի, Կիլիկիոյ ու տակաւին Արցախի եւ Հայաստանի տար-

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ԱՐԱ ԱՀԱՐՈՆԻԱՆԻ

Հանգուցեալ Արա Ահարոնեանի մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Յունիս 2021-ին, Փասաթինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ (2215 E. Colorado Blvd., Pasadena, CA 91107), յաւարտ Ս. Պատարագի:

- Խնդրողներն են՝
- Այրին՝ Տիանա Ահարոնեան
- Դուստրը եւ փեսան՝ Ռիթա եւ Անդրէ Սարուխանեաններ
- Որդին՝ Ալեքս Ահարոնեան
- Տէր եւ Տիկ. Շահէ եւ Արփի Կանիմեաններ
- Տէր եւ Տիկ. Զոհրապ եւ Գարինէ Կանիմեաններ
- Օրդ. Թամար Կանիմեան
- Տոքթ. Շիրազ Կանիմեան
- Տէր եւ Տիկ. Տիրան եւ Աննա Տեփանեաններ
- Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

Լիբանանահայ Գրականագետ

Շարունակուած էջ 12-էն

Ան ստացած է բազմաթիւ շքանշաններ եւ գնահատագիրներ.- Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մեսրոպ Մաշտոց շքանշանը, Հայաստանի Հանրապետութեան «Մովսէս Խորենացի» շքանշանը, Հայաստանի Գրողներու Միութեան շքանշանը, 2011-ին՝ ԹՄՄ «Հայկազնի Ուզունեան» գրական մրցանակը, ԹՄՄ «Արարատ» ոսկէ մետալը, Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարարութեան «Ուրիշմ Մարտիկան» մետալը, Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան յուշամետալը, պատուոց դոկտորի տիտղոս Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային եւ այլն: Վերջին տարիներուն ձեռնհասօրէն կը վարէր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կից հայագիտական հիմնարկը, որմէ ընթացաւարտ եղան բազմաթիւ ուսանողուհիներ: Ան մասնակցած է հայագիտական բազմաթիւ համագումարներու, գանազան առիթներով տուած դասախօսութիւններ՝ գրական-մշակութային հարցերու նուիրուած: Ահագանգիչ եւ վաւերագրական գրքոյկ մըն էր 2002-ին իր պատրաստած «Լիբանանահայ Դպրոցը. «Թիւեր եւ Մտորումներ» ուսումնասիրութիւնը: Ժ. Դանիէլեանի մտերիմներէն Թորոս Թորանեան 1990-ին կը գրէր. «Կը մնայ, որ ինչպէս ինք նախագծած է, իր այս բազմա գրադուրութեան մէջ շարունակէ բանասիրական մատենագիտական աշխատանքները, որոնք անկասկած նորութիւններ կրնան բերել եւ նորութիւններով հաստատել մեր մշակոյթի պատմութիւն դարձած եւ պատմութիւն դարձող շրջաններուն աշխատանքները» եւ ապա՝ «Երկար, երկար ճանապարհ եւ անխոնջ ուղեւորի եր կաթ գաւազան մեր մշակոյթի սուգակիրն եւ արպինիս տին» («Ապրող Մարդեր», Պէյրութ, 1991, էջ 82-83):

Ան կեանքի երկու հարուած ստացաւ. առաջին՝ երբ ինքնաշարժի գոհ գնաց իր կրտսեր դուստրին՝ Արփիին կողակիցը, որբեւայ-

րի թողելով երիտասարդ ընտանիքը, եւ 4 Օգոստոս 2020-ի Պէյրութի նաւահանգիստին համայնաքանդ պայթումը, երբ կորանցուց իր մէկ աչքը: Ան դարմանումի համար ուղղուեցաւ ԱՄՆ՝ երէց դուստրին՝ Մարալին մօտ: Վստահաբար, այդ անհղ պայթումին օրը ինքն իրմէ աւելի մտահոգ եղաւ իր բնակարանին գիրքերով, հաւաքածոներով, արխիւով եւ արժէքաւոր մատենաներով: Գրքամուլ է վերջապէս...:

ԵՐԿՈՒ ԴՐՈՒԱԳ

Առաջին.- փոքր տարիքիս երբ հայրս իր բարեկամներուն այցելութիւններ կու տար, երկու տուներ գրգռած էին իմ բարի նախանձ.- Մարտիրոս Գուշագճեանի եւ Ժիրայր Դանիէլեանի, որովհետեւ անոնց բնակարաններուն պատերը լիուրի «ծեփուած» էին կուշտկուշի, կարգապահօրէն շարուած հատորներով, խճողուած էին կուտակուած մատենաներով: Այսօր, իմ բնակարանս երբ նոյն պատկերը կը պարզէ, ոչ ոք բարի նախանձ կը տածէ: Ո՛վ պիտի գնահատէ գիրքն ու գրադարանը...:

Երկրորդ.- երբ Թէքեան Կեղ-րոնին մէջ տեղի կ'ունենար «Բանասիրական Որոնումներ» հատորին շնորհահանդէսը, այսպէս պատմեց Ժ. Դանիէլեան.- Օր մը, զպրոցի դասաժամերէն ետք, փոքր դուստրը Արփիին գալով կը հարցնէ. «Հայրիկ, մենք հարո՞ւստ ենք», ինչո՞ւ կը հարցնէ Ժ. Դանիէլեան, «աշակերտ մը հարցուց զբօսանքի ժամուն» կը բացատրէ Արփիին: Դուն ի՞նչ պատասխանեցիր՝ կը յարէ հայրը, որոշ տատանումներէ եւ վարանումէ ետք Արփիին պատասխանած է՝ «այո՛, հարուստ ենք, մեր տունը հազարաւոր գիրքեր ունինք...»:

Գիրքի հարստութեան հաւատացած է Ժիրայր Դանիէլեան, գինուորագրուած է անոր եւ իր 80-ամեակին առիթով ամբողջական ապաքինում մաղթելով կ'ըսենք՝ հայ գիրքը, մտաւորականը եւ ընթերցողները առողջ վերադարձիդ կը սպասեն, Ժիրայր Դանիէլեան... «ԱՐԱՐԱՏ» ԼԻԲԱՆԱՆ

Անկախութեան եւ Ինքնուրոյնութեան

Շարունակուած էջ 14-էն

բեր գիւղերէն ու քաղաքներէն նկարներ: Այս նկարներուն ան կը միացնէ նաեւ նոյն այս վայրերուն մէջ ծնած ու ապրած հայ հերոսներու եւ մտաւորականներու նկարները: Քաղաքական եւ շնորհաւորելի նախաձեռնութիւն մը իսկապէս:

Չեմ գիտեր ինչո՞ւ, բայց Արամ Պէյ Չորագեանի նկարը ուշադրութիւնս աւելի գրաւեց: Չէյթունցի ծնողքի մը գաւակն ալ չեմ, որ ըսեմ, թէ հայրենակցական կապն էր, որ գիտ այդ յատուկ ուշադրութեան հրաւիրեց: Արամ Պէյի աչքերն ու նայուածքն էին: Խորունկ, ինչ որ աւելի խթանեց գիտ մտնելու իր աչքերուն մէջէն իր ներաշխարհը՝ պեղելու համար հոն թաքնուած իր ինքնուրոյնութիւնը: Անոր աչքերուն եւ նայուածքին մէջ տեսայ հաստատակամ եւ ամուր կեցած մարդը: Ազգային ինքնուրոյնութեան մը հաւատացած ու կառչած հերոսը, որ երբեք չսակարկեց իր ինքնութիւնը: Գիտցաւ, թէ ե՛րբ եւ ինչպէ՛ս գէնքին պիտի ապաւինէր, որպէսզի փրկէ իր ժողովուրդը: Եւ փրկեց... Պատմութիւնը կը վկայէ Արամ Պէյի սիրագործութիւններուն եւ քաղաքային ինքնուրոյնութիւն կերտած մարդն էր, որուն բարոյական արժեքափոխ հայրենիքը եւ անոր անկախութիւնն էր: Արժէքին հաւատացած մարդն էր:

Հայը առաջին քրիստոնեայ ժողովուրդը եւ պետականութիւնն է աշխարհի վրայ: Այս իմաստով, մենք ազգովին որոշեցինք «Տէրօջը հոգին» մեր վրայ առնել: «Եւ հոն, ուր Տէրօջը հոգին կայ, հոն

ազատութիւն կայ» (Բ. Կորնթացիս 3:17): Այս իմաստով, ազատութիւնը, որ անկախութիւնն է եւ ինքնուրոյնութիւն, եւ որուն միջոցով որոշած ենք շարունակել մեր կեանքերը ապրել, մեզ կը պարտաւորեցնէ գիտակցիլ մէկ մեծ պարտականութեան, որ մեր առջեւ կը դրուի: «Թէ ազատութիւնը մարմինի ցանկութիւններու պատճառ պէտք չէ ըլլայ, հապա սիրով իրարու ծառայութիւն ընելու» (Գաղատացիս 5:13):

Եթէ որոշած ենք պահել ու պահպանել մեր ազգային անկախութիւն-ազատութիւնը եւ ինքնուրոյնութիւնը, ապա պիտի գիտակցինք, թէ գայն չաջողցնելու գրաւականը սիրոյ ծառայութեան մէջ է: Սիրոյ ծառայութիւնը վեր է անհատական թէ այլ հաշիւներէ եւ սակարկութիւններէ: Ան ծառայութիւն մըն է արժէքի կեանքը եւ համակարգը կերտելու մեր կեանքերուն համար:

Առաջին հանրապետութիւնը մեկնարկեց այս սիրոյ ծառայութիւնը, երբ հիմը դրաւ մեր պետականութեան: Երկրորդ հանրապետութիւնը շարունակեց նոյնը: Եւ այսօր ունինք երրորդը: Մեր պարտաւորութիւնը եւ պատասխանատուութիւնն է պահել եւ կերտել այն, ինչ որ ունինք այսօր:

Պահելու եւ կերտելու համար պէտք ունինք սիրոյ ծառայութեան գիտակցութեան: Այն, որ պիտի շինէ մեր անկախութիւնը: Անկախութիւնը՝ ազգային ազատութեան եւ ինքնուրոյնութեան գրաւակաւնով:

Հոն, ուր հայուն կեանքը պիտի ապրինք:

Անկախութեան եւ ինքնուրոյնութեան հպարտութեամբ:

Իմ Թատերական Ուղեւորութիւնը

Շարունակուած էջ 12-էն

Թացքին դուն դարձար արուեստ փայլատակող աստղը հայութեան երկնակամարին ու պիտի մնաս ապառաժեայ խարիսխը սփիւռքահայ թատրոնին ու մշակոյթի պատմութեան:

Վաստակաշատ արուեստագետի բեմադրութեամբ ներկայացուած բոլոր բիէսները ժամանակագրական կարգով տեղ գտած են յիշատակարանին մէջ, 1966 թուականէն սկսեալ մինչեւ 2019: Առանց հաշուելու կարգ մը ֆիլմերու մէջ

իր ստանձնած դերակատարութիւնները:

Գրիգոր Սաթամեանի այս յիշատակարանը կարծէք առձեռն շարժապատկեր մը ըլլար, ուր կը տողանցէ մեծ արուեստագէտը քաղաքէ քաղաք եւ բեմէ բեմ, տասնեակ հազարաւոր թատերասէրները հիացնելով իր արուեստի բարձր կատարումներով:

Վարձքը կատար սիրելի մասնաթիւ:

Արեւշատ եւ բեղմնաւոր երկար տարիներ Հայ թատրոնի մեծ նուիրեալին:

ՎԱՐՁՈՒ ԲՆԱԿԱՐԱՆ ՀՈՒՎՈՒՏԻ ՄԷՋ

Վարձու է 4 unit-անոց security շէնքի մէջ 3 սենեակ 2.5 բաղնիք ունեցող Townhouse մը լաւ շրջանի մէջ: Ամբողջութեամբ վերանորոգուած, նոր բաղնիք, նոր լեմիւնէթ, նոր կրանիտ, central AC/H, պատշգամ եւ Fireplace: Garage-ին մէջ կրնաք ձեր washer/dryer-ը տեղադրել: Section 8 OK.

Հեռաձայնէք Մերիին՝ 213-448-450

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

Massis2@earthlink.net (626) 797-7680

«Չելսի» Յաղթական Ախոյեաններու Լիկային Աւարտական Մրցումին



Փորթուգալական Պորտուի «Դրագաու» դաշտին վրայ տեղի ունեցած Եւրոպայի Ախոյեաններու Լիկայի աւարտական խաղին մրցեցան անգլիական երկու խումբեր՝ «Չելսի» եւ «Մանչեսթըր Սիթի»

«Չելսի» Անգլիոյ նորընծայ ախոյեանին յաղթեց նուազագոյն հաշուով: Միակ կողմ 42-րդ վայրկեանին նշանակեց գերմանացի կիսապաշտպան Կայ Հավերցը: Այդ 21 տարեկան գերմանացիին առաջին կոյն էր Ախոյեաններու Լիկայի մրցումներուն գծով: Այս մրցաշրջանին «Չելսի» «Մանչեսթեր Սիթիին» յաղթեց երրորդ յաջորդակաքն խաղը ըլլալով:

«Չելսի» Ախոյեաններու Լիկայի տիտղոսը նուաճած էր նաեւ 2011/2012 մրցաշրջանին՝ եզրափակիչին յաղթելով «Պայըրն Միւնիխին»:

Մխիթարեան Երկու Տարիով Երկարաձգեց Պայմանագիրը «Ռոմայի» Զետ

Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբի կիսապաշտպան Հենրի Մխիթարեանը երկարաձգած է պայմանագիրը իտալական «Ռոմայի» հետ: Այս մասին հաղորդած է ակումբի մամուլի ծառայութիւնը: Մխիթարեանի նոր պայմանագիրը նախատեսուած է երկու տարուան համար:



«Երկու տարուան ընթացքին ես սիրահարուած եմ այս ակումբին եւ քաղաքին ի շնորհիւ ակումբի երկրպագուներու: «Ռոման» մեծ մարտահրաւէրներ ունի յաջորդ մրցաշրջանի համար եւ ես հպարտ եմ իմ մասնակցութիւնը ունենալու», - ըսած է Մխիթարեանը:

Արդէն աւարտուած Սերիա Ա-ի մրցաշրջանին Մխիթարեանը «Ռոմայի» կազմէն ներս նշանակած էր 14 կող եւ կատարած՝ 13 արդիւնաւէտ փոխանցում:

Ամերիկայի Գաւաթը Տեղափոխուած Է Պրագիլ

Հարաւային Ամերիկայի ֆուտպոլային ընկերութեան որոշումով՝ Ամերիկայի Գաւաթի խաղարկութիւնը տեղի պիտի ունենայ Պրագիլի մէջ Յունիսի 13-էն Յուլիսի 10-ը, կը հաղորդէ մրցաշարի թուիթերեան էջը:



Ամերիկայի Գաւաթը պէտք է կայանար Գոլումպիայի եւ Արժենտինի մէջ, սակայն նախ՝ Գոլումպիան գրկուեցաւ մրցաշարը անցկացնելու իրաւունքէն կորոնավիրուսի համավարակի եւ անկայուն քաղաքական վիճակի պատճառով, ապա՝ Արժենթին գրկուեցաւ այդ իրաւունքէն կորոնավիրուսի համավարակի երրորդ ալիքի հետեւանքով:

Սերխիո Ագուերոն՝ «Պարսելոնայի» Ֆուտպոլիստ

Արժենթինի ֆուտպոլի ազգային խումբի յարձակող Սերխիո Ագուերոն պաշտօնապէս փոխադրուած է սպանական «Պարսելոնա» ակումբը:

Ակումբի մամուլի ծառայութիւնը կը տեղեկացնէ որ, Արժենթինցի յարձակողի հետ կնքուած է երկու տարուան պայմանագիր: Ան խումբին միացած է ազատ գործակալի կարգավիճակով:

Մինչ այս Ագուերոն հանդէս կու գար անգլիական «Մանչեսթըր Սիթի» կազմէն: Ան Մանչեսթեր տեղափոխուած էր 2011 թուականին

Հայաստանի Ֆուտպոլի Ազգային Խումբը Ոչ-Ոքի Աւարտեց Հանդիպումը Աշխարհի Փոխ-Ախոյեանի Զետ




Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբը Յունիս 1-ին կայացած ընկերական խաղին մրցեցաւ աշխարհի առաջնութեան փոխախոյեան խորուածի հաւաքականին հետ, վելիկա Գորիցայի «Քաղաքային» մարզադաշտին վրայ:

Հայաստանի ընտրանին լաւ հնարաւորութիւն ունէր բանալու խաղի հաշիւը, սակայն էդգար Բաբայեանի հարուածը չեղեցաւ մրցակիցի դարպասէն: Այնուհետեւ խորուածի տիրեց նախաձեռնութեանը եւ 23-րդ վայրկեանին առաջ անցաւ հաշուի մէջ: Անկիւնային խաղարկումէն յետոյ աչքի գարկաւ Իվան Պերիչիչը: Խումբերը հանգստի դրացին խորուածներու նուազագոյն առաւելութեամբ:

Երկրորդ կէսին խորուածի ազգային ընտրանին հիմնականին մէջ կը տիրէր նախաձեռնութեանը: Հայաստան կարողացաւ օգտագործել իր հնարաւորութիւնը, եւ հաշուի հաւասարութիւնը վերականգնեց վրէժմար Անգուլոն: Կապաուսի մի քանի փոփոխութիւնները փոխեցին հաւաքականի տեսքը, որ սկսաւ աւելի գործօն ըլլալ: Ի վերջոյ հանդիպումը աւարտեցաւ ոչ-ոքի՝ 1:1:

Աշխարհի Երկրորդ Ռակետը Հրաժարեցաւ Ֆրանսայի Բաց Առաջնութեան Մասնակցութիւնէն

Աշխարհի կանանց երկրորդ ռակետ Նաոմի Օսական հրաժարեցաւ շարունակել մրցապայքարը թենիսի Ֆրանսայի բաց առաջնութեան, որ «Մեծ սաղաւարտ» շարքի երկրորդ մրցաշարն է: Ան դուրս եկած էր երկրորդ շրջան:



«Ես կը կարծեմ, որ հիմա մրցաշարի, միւս խաղացողներու եւ իմ բարեկեցութեան համար լաւագոյնը կ'ըլլայ իմ հեռանալը, որպէսզի իւրաքանչիւրը կարողանայ կեդրոնանալ թենիսի վրայ, որ հիմա Փարիզի մէջ է», - թուիթերի էջով գրած է ճափոնի ներկայացուցիչը:

Մինչեւ «Ռոլան Գարոսի» մեկնարկը Նաոմի Օսական յայտարարած էր, որ Փարիզի մէջ պիտի չի պատասխանէ լրագրողներու հարցերուն եւ պիտի խուսափի լրատուամիջոցներէն: Ան չմասնակցեցաւ առաջին մամուլի ասուլիսին եւ պատժուեցաւ 15 հազար տոլարով: «Մեծ սաղաւարտի» մրցաշարերու նախագահները տարածեցին յայտարարութիւն եւ զգուշացուցին, որ Օսական կը որակագրկուի, եթէ շարունակէ բոլորտը:

Յիշեցնենք, որ Նաոմի Օսական նախորդ տարի յաղթած էր US Open-ի ընթացքին եւ ճանաչուած էր աշխարհի լաւագոյն մարզուհի Laureus-ի վարկածով:

Սուվըրիկան Դատի Տուած Է ՖԻՖԱ-ԻՆ Եւ ՈւեֆԱ-ԻՆ

Եւրոպական Միութեան դատարանը (CJEU) արձանագրած է եւրոպական Սուվըրիկայի հայցը ընդդէմ ՖԻՖԱ-ի եւ ՈւեֆԱ-ի: Սուվըրիկան 2 կազմակերպութիւններուն կը մեղադրէ լրագրութիւնները չարաշահելու մէջ, կը հաղորդէ Mundo Deportivo-ն:

Աւելի վաղ ՈւեֆԱ-ն կարգապահական գործեր յարուցած էր Սուվըրիկայի նախագծէն չհրաժարուած Մատրիտի «Ռեալի», գաթալոնական «Պարսելոնայի» եւ Թուրինի «Եուվենթուսի» դէմ:

Սուվըրիկայի 12 հիմնադիր ակումբներէն միւս 9-ն աւելի կանուխ պաշտօնապէս հրաժարած էին նախագծի գաղափարէն:

սպանական «Աթլետիկոյէն»: Անգլիոյ ախոյեան «Մանչեսթըր Սիթիի» կազմին մէջ արժենթինցի ընդհանուր առմամբ մասնակցած է 384 խաղի եւ դարձած է 257 կողի հեղինակ: Ագուերոյին կը պատկանի ակումբի լաւագոյն ռմբարկուի մրցանիչը: